

33-34(499-500)

5.12.2017

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԻԹ

Lusarar

## ԱՆՍԱՀ ԵՆ ԱՎՈՅԻ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս, «Հայրենիք» և «Ոսկե արծիվ» շքանշանների ասպետ Մոնթե (Ավո) Մելքոնյանը նոյեմբերի 25-ին կղաճնար 60 տարեկան: Եթե նա ողջ լիներ, թերևս Արցախի քաղաքներում ու գյուղերում այդքան շատ չլինեին նրա հորելյանի կապակցությամբ անցկացվող միջոցառումները, քանզի Մոնթեն խոսքից առավել շատ գնահատում էր գործը: Դրանք առավել շատ պետք են պարտության գուցե թե հաշվետու լինելու հերոսին՝ ինչքանով ենք հավատարիմ նրա գաղափարների և ինչպես ենք կյանքում իրագործում դրանք: Այս օրե-

անվտանգության պահպանությանը: Նա օժտված էր աստվածային շնորհով, մարտի դաշտում խիզախ էր ու անձնուրաց, ոչ միայն հայրենասեր ու անձնագոհ ազատամարտիկ, հրամանատար էր, այլև բացարձակ ազնվության չափանիշ: Առաջին հայացքից բարդ ու հակասական կերպարի հետևում պարզ ու հասարակ, իրեն մյուսներից չզերադասող, բյուրեղյա մաքրության տեր անձնավորություն էր նա: Ազգային համապարփակ նպատակների կրողն էր Ավոն, իսկ Արցախյան ազատամարտը նրա համար դարձավ ողու բարձրագույն թռիչք: Իր անձ-

Արարատ Առստամյանը, որն առաջին անգամ կատարել է 1994 թվականի հունիսի 12-ին՝ Ավոյի մահվան տարեկիցի օրը, Ավոյի աղբյուրի մոտ: Ներկաները ունկնդրեցին երգը «Ասպետ» համույթի մենակատարների ու հեղինակի մասնակցությամբ:

Ցանկությունս է, որ մեր բանակը միշտ հաղթող լինի, և Մոնթեի մահն հերոսներ շատ ունենանք, բայց ոչ թե նահատակ, այլ կենդանի»:



ՊՆ խորհրդական, գեներալ-մայոր Համայակ Հարոյանը, որը ժամանակին Մարտունու պաշտպանության գործում մեծ դերակատարություն է ունեցել, հուշ-երեկոյի մասնակիցներին հավաստիացրեց, որ ողջ հայ ժողովուրդն է նշում ազգային հերոսի ծննդյան 60-ամյակը: Ինքն անձամբ ներկա է գտնվել մի շարք միջոցառումների և ակամատես եղել, թե ինչպես է յուրաքանչյուր ոք ճանաչում, սիրում ու գնահատում իր լեգենդար հերոսին: Նա գոհունակությամբ նշեց, որ Մոնթեի ձեռքի տակ աճած հրամանատարները ներկայում բարձր պաշտոններ են զբաղեցնում հայ-

Ցանկությունս է, որ մեր բանակը միշտ հաղթող լինի, և Մոնթեի մահն հերոսներ շատ ունենանք, բայց ոչ թե նահատակ, այլ կենդանի»:



կական բանակում: Հ. Հարոյանն իր խոսքն ավարտեց՝ դիմելով բոլոր սպաներին, զինվորներին. «Մեր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախի Հանրապետությունը, սրբազան հող է...Ամեն մի զինծառայող պիտի զգա պատասխանատվություն սրբազան հողը պաշտպանելու և հանձնելու գալիք սերունդներին: Այս վերջին օրերին ես շրջել եմ սահմանային դիրքերով և տեսել, որ բոլորը զգում են այդ պատասխանատվությունը:

Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզի սաների՝ Մոնթեին ծնունդած արտասանությունները հիացմունքի պահեր պարզեցին միջոցառման մասնակիցներին:



րին մթնոլորտը հագեցած է Մոնթեով: Նրա անունը բոլորի շուրթերին է, նրանց, որ մերձավորներն են, ժամանակակիցները, և նրանց, որոնք նոր են հասակ առնում: Մոնթեն բոլորին է ու բոլոր ժամանակներին: Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում նոյեմբերի 29-ին տեղի ունեցած հուշ-երեկոյին ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Աժ նախագահ Աշոտ Դուլյանը, ՁՈՒ գլխավոր շտաբի հետ, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, Աժ պատգամավորներ, կառավարության անդամներ, բարձրաստիճան զինվորականներ, հերոսի մարտական ընկերներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:



Ավոն, հիրավի, վայելում էր և այսօր էլ վայելում է համաժողովրդական սեր: Պատահական չէ, որ շատ ծնողներ իրենց նորածին տղաներին անվանակոչում են Ավո կամ Մոնթե:

## ՄՈՆԹԵ ՄԵԼԵՈՆՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԼԵԳԵՆԴ...

Նա եկավ հայրենիքի մասին իր իմացությունը անուրազելու և պատմական իրողություններն արդարացիորեն վերականգնելու հաստատ վճռականությամբ: Եկավ ու դարձավ զինվոր, այն է՝ երկրի մարտիկ, որը պիտի գործեր, հերոսանար և ժողովրդի հիշողության մեջ մնար որպես ժամանակի ու տարածության բոլոր սահմանները հաղթահարած մարդ-լեգենդ...

1957թ. նոյեմբերի 25-ին հեռավոր Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքից 40 մղոն հեռավորության վրա գտնվող Վայսելիա գյուղաքաղաքում՝ հմուտ արհեստավոր ու բարի մանկավարժ Չարլզ և Ջաբել Մելքոնյանների հարկի տակ, ծնվեց նրանց անդրամիկ զավակը և անվանակոչվեց Մոնթե:

Նախնական կրթությունը ստացավ Կենտրոնական Կալիֆոռնիայի հանրային դպրոցներից մեկում: 1969-1970 թվականներին ծնողների հետ ճամփորդելով Եվրոպայի և Միջին Արևելքի շուրջ 40 երկրներում՝ Մոնթեն այցելեց նաև Արևմտյան Հայաստան ու եղավ իր պապերի տանը: Այս իրադարձությունը 13-ամյա պատանու կյանքում շրջադարձային նշանակություն ունեցավ: Տարիներ անց նա խոստովանեց, որ այդ ճամփորդության արդյունքում ինքն իրեն ավելի շատ հայ զգաց:

1978թ. որպես արտակարգ ընդունակություններով օժտված աշակերտ՝ Մոնթեն ուսումը շարունակելու նպատակով գործուղվեց ճապոնիա: 18 ամիս Օսակա քաղաքում սովորելուց հետո վերադարձավ Վայսելիայի միջնակարգ վարժարանը, ապա ընդունվեց Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը: Ուսման հետագա ընթացքից պարզ դարձավ, որ մասնագիտության ընտրության հարցում Մոնթեն առավելագույն առաջնություն է իր նախնայաց երկրի մասին համակողմանի գիտելիքներ ստանալու առողջ դատողությամբ: Համալսարանական տարիներին նա առանձնահատուկ հետաքրքրությամբ ուսումնասիրեց Ուրարտական պետության պատմությունը և 1978թ. «Ուրարտական ժայռափոր դամբարանները» վերտառությամբ ավարտաճառի համար ստացավ բակալավրի աստիճան:

Կալիֆոռնիայի համալսարանում սովորելու տարիները, բացի գիտականից, միաժամանակ քաղաքական աշխարհայացքի ձևավորման, հիրավի, կարևոր փորձաշրջան էր Մելքոնյանի համար: Այդ ընթացքում մի շարք ընկերների հետ միասին նա հիմնադրեց «Հայ ուսանողների միություն»-ը, որի նպատակն էր մեկ գաղափարի շուրջ համախմբել Բերկլիում սովորող սփյուռքահայ երիտասարդությանը և տվյալ կազմակերպության միջոցով համապատասխան աշխատանք տանել՝ ազգային նշանակության խնդիրները լուծելու համար: Միության կողմից այդօրինակ ձեռնարկումներից առաջինը տեղի ունեցավ 1978թ. ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության հերթական տարեկիցի առթիվ: Այդ օրը Մոնթեի անմիջական նախաձեռնությամբ համալսարանում կազմակերպվեց հայ ժողովրդի պատմությանը նվիրված ցուցահանդես:

Բերկլիում 4 տարվա ծրագիրը 2,5 տարում ավարտելով՝ Մոնթեն որոշում է ուսումը շարունակել Օքսֆորդի համալսարանում: Տաղանդավոր երիտասարդի ապագան կարծես թե կանխորոշված էր, և շատերի համոզմամբ, նա արդեն ընտրել էր գիտության ճանապարհը: Սակայն ամեն ինչ փոխվեց, երբ 1978թ. մարտին, ինչպես ինքն էր ասում, «հայրենիքի ավելի մոտ լինելու և մայրենի լեզուն սովորելու համար» մեկնեց Լիբանան և ակամատեսը դառնալով այստեղ ստեղծված ներքաղաքական բարդ իրավիճակի՝ ներգրավվեց Բեյրութի հայկական թաղամասերի պաշտպանության գործին: Այդ քայլով Մոնթեն փաստորեն հրաժարվեց Օքսֆորդում ուսումը շարունակելու մտքից և նվիրվեց ազգային-ազատագրական պայքարին: Դրանով երիտասարդ Մելքոնյանը թևակոխեց կյանքի նոր փուլ:

1980թ. գարնանը նա միացավ դեռևս հինգ տարի առաջ ստեղծված Հայաստանի ազատագրական հայ գաղտնի բանակին՝ ԱՍԱԼԱ-ին, և շուրջ երեք տարի անդամակցելով նրան՝ անվերապահորեն կատարեց կազմակերպության կողմից իր առջև դրված բոլոր խնդիրները և միևնույն ժամանակ մնաց Հայկական հարցի լուծման սեփական սկզբունքների կրողը:

Ս. ԽԱԶՍԻՐՅԱՆ

ԱՍԵ

# ՄՈՆԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԼԵԳԵՆՂԸ...

**1** Երա համար պատմական ճշմարտության վերահաստատման խնդիրը սոսկ նպատակ լինելուց առաջ գաղափարներով ամրագրված համոզմունք էր: Որպես անհատ՝ նա ուներ Հայկական հարցի լուծման իր բանաձևը, որը ենթադրում էր երկարատև ու շարունակական գործունեության հստակ ծրագիր: Հավատարիմ լինելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարին՝ Մոնթեն նախապես իր համար ճշտեց հետևյալ սկզբունքը՝ առանց հստակ նպատակի և քաղաքական գծի հնարավոր չէ մշակել իրապաշտ ռազմավարություն, իսկ առանց ռազմավարության ցանկացած նպատակ անհասանելի է...

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանում տիրող վիճակին՝ նա ասում է հետևյալը. «Թուրքիայի վարչակարգն առայսօր ուղղակի և անուղղակի ձևերով արգելում է իրենց հայրենիքում վերահաստատվելու հայերի ազգային, քաղաքական, տնտեսական և մարդկային իրավունքները: Նման պայմաններում հայ ժողովրդի իրավունքների վերականգնումը կախված է հայ ազգային ինքնորոշման ապահովումից այն հողատարածքում, որը պատմականորեն բնակեցված է եղել հայերով և կապված է նրա հետ: Իսկ այդ պայքարը պետք է տարվի գիտական մոտեցման որդեգրումով, պայքարի ժողովրդականացմամբ և հեղափոխական ուժերի միասնությամբ...»:

1981թ. նոյեմբերի 11-ին Ֆրանսիայի Օրլի օդանավակայանում կեղծ անձնագիր կրելու մեղադրանքով և Հռոմում թուրք դիվանագետի դեմ մահափորձ կատարելու կասկածով Մոնթեն առաջին անգամ ձերբակալվեց: Դատարանում արտասանած իր ինքնապաշտպանական ճառում, անդրադառնալով կեղծ անձնագիր կրելու մեղադրանքին, նա համարձակորեն հայտարարեց հետևյալը. «Բոլոր հայերը կեղծ փաստաթղթեր են կրում: Նրանք կրում են բրազիլական, ֆրանսիական, լիբանանյան փաստաթղթեր...սակայն դա ոչինչ չի մշակակում, որովհետև դրանք բոլորը կեղծ են այնքան ժամանակ, քանի դեռ հայկական չեն...»:

Մեկամսյա ձերբակալությունից հետո Մոնթեն ազատ արձակվեց և անցավ ընդհատակյա գործունեության...

1983թ. կեսերին ԱՍԱԼ-ի ղեկավարության հետ ունեցած գաղափարական և ռազմավարական բնույթի մի շարք հակասությունների պատճառով նա թողեց գաղտնի բանակի շարքերը և մի խումբ համախոհների հետ ստեղծեց «ԱՍԱԼ-Հեղափոխական շարժում» կազմակերպությունը: 1985թ. նոյեմբերին երկրորդ անգամ ձերբակալվեց Փարիզում՝ հայկական պահանջատիրական բնույթի անլեգալ գործունեության, ինչպես նաև դարձյալ կեղծ անձնագիր կրելու մեղադրանքով և մինչև 1989թ. հունվար ամիսը մնաց ազատագրության մեջ: Այդ ընթացքում Մեյլոնյանը հեղինակեց մի շարք հոդվածներ, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի նորագույն ազատագրական պայքարի մարտավարությանը: Ունենալով ազատագրական մարտերի և զինյալ գործողությունների ծանրակշիռ փորձ, այդուհանդերձ, Մոնթեն նախապատվությունը տալիս էր պայքարի գիտակցական ձևին: Ըստ նրա՝ յուրաքանչյուր ժողովրդի հաղթանակ առաջին հերթին ազգային համախմբվածության և միաբանության արգասիք է: «...Եթե որևէ բան պիտի իրագործվի, ապա հայ ժողովուրդն է, որ պետք է իրագործի, - ասում էր նա: - Զենք հավատում բարյացակամ ընկերներին, «Արդարության» անխուսափելի հաղթանակին, «Լոբբիներին», գաղտնի կերպով ու ճարակորեն գերուժերի քաղաքականության վրա ազդելուն և այլն: Հավատում ենք իր իսկ ապագան որոշելու մեր ժողովրդի կարողությանը...»:

1988-ի փետրվարին Արցախում ծավալված ազգային - ազատագրական շարժման մասին Մոնթեն լսեց բանտում: Թեկուզ դժվարությամբ, բայց և այնպես տարբեր ճանապարհներով նա կարողացավ տեղեկություններ ստանալ տեղի ունեցող դեպքերի և իրադարձությունների մասին և կատարել համապատասխան հետևություններ: Այս օրերին իր կողմից գրված «Մեր համերաշխությունն Արցախի հետ» վերտառությամբ հոդվածում Մոնթեն անչափ բարձր գնահատեց արցախահայության բռնած դիրքորոշումը և ընդգծեց հետևյալը. «Մենք հպարտ ենք, որ Արցախի ժողովուրդը, որ այնքան փոքր է խորհրդային ողջ բնակչության համեմատ, ԽՍՀՄ-ում դարձել է առաջատար ուժ՝ պահանջելով ուղղել անցյալի սխալները»:

Միաժամանակ նա ավելացնում է, որ արցախցիների առաջ քաշած պահանջատիրությունը չի կարելի համարել տեղի հայ բնակչության խնդիրը, քանի որ այն շոշափում է համազգային հետաքրքրություններ: Այդ իսկ պատճառով Մոնթեն ոգևորությամբ էր խոսում Երևանում տեղի ունեցող ցույցերի և հանրահավաքների մասին՝ դրանք գնահատելով որպես Արցախի ժողովրդին մայր հայրենիքի կողմից ցուցաբերվող օժանդակության լավագույն օրինակ: Գեռ ավելին, նրա համոզմամբ՝ Հայաստանի և Արցախի միջև սկսված համերաշխության գործընթացին իր գործուն աջակցությունը պետք է ցուցաբերի նաև աշխարհասփյուռ հայությունը: «Մեր ժողովրդին օգնելու համար մեզինքն յուրաքանչյուրը պետք է անձամբ մասնակցի պայքարին, գրում է Մոնթեն:



Հայ ժողովրդի պատմության մեջ քիչ չեն օրինակները, երբ ազգի համար ճակատագրական պահերին նրա տաղանդավոր զավակները գենք են վերցրել՝ պաշտպանելու հայրենիքը: Դա առավելապես ցայտուն երևաց 20-րդ դարաշրջանում: Այս առումով խորհրդանշական է ազգային հերոս Մոնթե Մեյլոնյանի կերպարը: Մարդ, որ բոլոր տվյալներն ուներ մեծ գիտնական դառնալու, փափուկ կյանք վարելու օվկիանոսից այն կողմ, սակայն թողած այդ ամենը՝ արյան կանչով վերադարձավ հայրենիք՝ Արցախի համար օրհասական պահին կանգնելով նրա պաշտպանության դիրքերում:

Լեգենդար հերոս Մոնթե Մեյլոնյանի ծննդյան 60-ամյակի կապակցությամբ Արցախի մայր բուհում կազմակերպվեց հուշ-երեկո: Ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, ռեկտոր Մանուշ Մինասյանը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, հյուրեր:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Առստամյանը բնութագրական գծերով ներկայացրեց հերոսի հայրենամեծեր կյանքն ու գործունեությունը: Մոնթե Մեյլոնյանը մեկն էր հայ ժողովրդի՝ ազատության համար նվաճ պայքարում ծնված իրական հերոսներից, որի մեջ ներդաշնակորեն միախուսված էին թե՛ զորականի տաղանդն ու հմտությունները, թե՛ գիտնականի ծիրանը ու շնորհքը, թե՛ բարոյական բարձրագույն արժեքները: Ազգային մեծություն, որին յուրահատուկ անկեղծությունը, ազնվությունը, հայրենիքի հանդեպ անհուն նվիրվածությունը նրա նկատմամբ ստեղծեցին համազգային սեր և ակնածանք:

# ԱՎՈՅԻ ՄԱՍԻՆ ՄԻՇՏ ՊԵՏՔ Ե ԽՈՍԵԼ

«Նա այն հերոսներից է, որին անընդհատ, շարունակաբար պետք է ճանաչել, նրան մերձենալ, դաստիարակվել նրա գաղափարներով», -միջոցառման բացման իր խոսքում ասաց Ա. Առստամյանը: Հուշ-երեկոյին ներկա էր Մոնթեի զինակից, նրա մարտական ընկեր Մարտիրոս Ժամկոչյանը:

- Ավոյի մասին միշտ պետք է խոսել: Նոր սերունդը դաստիարակվում է այնպիսի ժամանակներում, որ եթե մենք չհիշենք մեր անցյալը, մեր հերոսներին, դատապարտված ենք ինքնուրացման: Իհարկե, մեր պատմությունը, գիտելիքները պետք է փոխանցենք մատաղ սերունդին, որ նա ճիշտ դաստիարակվի և ճիշտ ուղիով գնա, -ասաց նա:

Մ. Ժամկոչյանը Ավոյին ճանաչում է 1978թ. Լիբանանից: Ինքն էլ ծագումով լիբանանահայ է: Ասաց, որ իրենց մարտական ուղին այդտեղից է սկսվել: Ինքն այդ ժամանակ 20 տարեկան էր, իսկ Ավոն եկել էր Լիբանան, որ հայերեն սովորի, ճանաչի՝ ինքն ու է: «Եվ այդպես մեր կապը հաստատվեց մինչև նրա վերջին շունչը: Ես նրան ճանաչեցի որպես մարդ, որպես հայրենասեր մարդ: Նա ընտանիքում չէր ստացել հայերի դաստիարակություն և եկավ Լիբանան, որպեսզի հայերեն սովորի: Դժբախտաբար, Լիբանանում քաղաքացիական պատերազմ էր գնում, և նա մասնակցեց ինքնապաշտպանական մարտերին հայկական թաղամասերում, իսկ մի քանի տարի հետո միացավ Հայաստանի ազատագրության գաղտնի բանակին, որի շարքերում ես էի: Միասին շարունակեցինք պայքարը: 1985թ. ես բաժանվեցի. պատճառն առանձին թեմա է (Շվեյցարիայում թուրք դեսպանին զգեստելու համար բանտարկված էր.-խմբ.): Ավոն ինձմից շուտ եկավ Հայաստան: Երբ բանտում էի, նրանից նամակ ստացա, որի մեջ գրում էր, որ հանկարծ ուրիշ տեղ չգնամ, գամ Հայաստան, մեր պայքարն այստեղ՝ Արցախում է: Եվ Սփյուռքի բոլորը տղաները պետք է մասնակցեն: Եվ այդպես էլ եղավ: Ինձ բախտ շնորհվեց, որ 1990թ. աշնանը Վազգեն Սարգսյանի հետ Շվեյցարիայում հանդիպեի: Ես ազատ էի արձակվել-

լու, և խնդրանքս էր տեղափոխվել Հայաստան: Այդ ժամանակ Սովետական Միություն էր, և մեզ նման մարդկանց համար դժվար էր. դաժան ժամանակներ էին: Բայց Սովետիությունը ինձ շնորհեց այդ իրավունքը, որ ժամանեմ Հայաստան:

1991թ. հունիսին ժամանեցի Հայաստան և Ավոյին միացա Երևանում, ու իրար հետ մեկնեցինք Շահումյան: Եղել ենք էրեջում, Բուզլուխում, Մանաչիդում... Դրանից հետո մեզ կանչեցին Երևան: 1992թ. ես ու Ավոն ջոկատ կազմեցինք, կոչվում էր «Հայրենասիրական ջոկատ», որի կազմում 17 հոգի էին, լավ պատրաստված, մարտական պատրաստակամություն անցած տղերք: Եկանք Մարտունու տարածք: Տեղական ինքնապաշտպանական խմբի տղաները միացան մեզ, և սկսեցինք կամաց-կամաց Մարտունին շրջապատած թուրքական զյուղերը մաքրել: Առաջինը Ննգու ճանապարհը մաքրեցինք և ճանապարհ բացեցինք դեպի մայրաքաղաք Ստեփանակերտ: Ավոյի և մեր տղաների շնորհիվ է, որ մեր 17-հոգանոց խումբը մեկ տարի հետո դարձավ մի քանի հազար: Եվ բազում գենդ-զինամթերք ունեցանք՝ թշնամուց խլված: Ավոյի բնավորությունը գիտեք, թշնամու զրահատեխնիկան չէր թողնում ոչնչացնել. այն մերը պիտի դառնա, ու այդպես արարում էր ամեն ինչ: Հատկապես առ հատկապես իր զինվորներին, սպաներին կերակրում էր իր գաղափարներով, տալիս իր գիտելիքները:

Ավոն մեզ հետ չէ այսօր, բայց Ավոյի գաղափարներով դաստիարակվում է մատաղ սերունդը: Ես ներկա եմ գտնվել Դիլիջանի նրա անվան ռազմական ուսումնարանի բացմանը, տեսել եմ, թե նոր սերունդը ինչպես է դաստիարակվում: Եթե Ավոն ողջ լիներ, կհպարտանար այդ ամենով,-հուզված ասաց Մոնթեի զինակից և գաղափարական ընկերը: Հուշ-ցերեկույթն ուղեկցվում էր ուսանողների ու զինվորների ուժերով կատարված ասմունքի, երաժշտական, պարային համարներով:

**Ս. ՎԱՐՐԻԵԼՅԱՆ**

# ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՎՈՅԻՆ

Հայոց նորօրյա Գոյամարտի մեծագույն հերոսներից Մոնթե Մեյլոնյանը նոյեմբերի 25-ին կդառնար 60 տարեկան, եթե 1993թ. հունիսի 12-ին պատահաբար չհանդիպեր նահանջող թշնամուն և նահատակվեր զրահամեքենայից արձակված արևի բեկորներից: Հերոսի ծննդյան օրվա առթիվ բազում միջոցառումներ են կազմակերպվել Քաշաթաղի շրջանի դպրոցներում:

Ծիծեռնակաճեղի Վարձա Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցում սկզբում կայացավ արիության դաս՝ 6-10-րդ դասարանների աշակերտների համար, ապա կայացավ ցերեկույթ՝ նվիրված օրվա հերոսին: Արիության դասը վարեց ԱՀ ՊԲ դպրոցի հետ համագործակցող Ն գործամասի ներկայացուցիչ, Արցախյան գոյամարտի մասնակից, Մոնթեի զինվոր, մայր Արտիկ Ազարյանը, որն իր հրամանատարի հետ բազում մարտերի է մասնակցել: Աշակերտներն ունկնդիր եղան Հայոց բանակի սպայի խոսքին, որը նվիրված էր մեր փառավոր հաղթանակներին

ու դրանք կերտող հերոսներին: Այնուհետև Ա. Ազարյանը դպրոցի զինղեկ Հայկ Հարությունյանի հետ իրականացրեց շարային վարժություններ, ցուցումներ տվեց աշակերտներին, կարևորեց շարային վարժությունների դերը: Առհասարակ՝



տեղեկացրեց, թե ինչքան կարևոր է զինվորի համար իմանալ, տիրապետել ու իրագործել բանակային կարգ ու կանոնը: Մոնթեին նվիրված ցերեկույթ-հանդեսը դպրոցի տնօրեն Ջուլիետա Գրիգորյանի մտահղացմամբ էր, որն իրականա-

ցավ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սյուզաննա Առաքելյանի կազմակերպմամբ: Սկզբում հնչեց Արցախի օրհներգը, եղավ լռության րոպե: Ցերեկույթին ներկա էր նաև դպրոցի նախկին սան, այժմ Ստեփանակերտի Զ. Իվանյանի անվան ռազմական ուսումնարանի կուրսանտ Նարեկ Ջախարյանը՝ տնօրենի որդին, որը, չնայած դեռ առաջին կուրսում է սովորում, սակայն արդեն ծանոթ է բանակային կյանքին:

Մոնթե Մեյլոնյան-հերոսի մասին պատմեցին դպրոցի աշակերտները, մեծարման խոսքեր ասացին Սեդախի՝ Մոնթեի կնոջ մասին, որը պատերազմի տարիներին համբերատար սպասում էր ամուսնուն, հաճախ այցելում առաջնագիծ: Հանդես եկան նաև ռազմահայրենասիրական երգերով, ընթերցեցին հուշեր հերոսի մասին, նրա նամակները՝ ուղղված Սեդախին: Միջոցառմանը, որն ավարտվեց Հայոց բանակի փառաբանումով, ներկա էին դպրոցի ուսուցիչները, ծնողներ, հյուրեր:

**Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ**

ՇԵՐՈՍԱԿԱՆ

ՄՈՆԹԵԻ ԳՈՐԾԸ ԶԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե

Նոյեմբերի 25-ին՝ լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան օրը, Արցախի հանրակրթական բոլոր դպրոցներում ԱՅ կրթության, գիտության և սպորտի ու Պաշտպանության նախարարությունների համագործակցության շրջանակում անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված հերոսի 60-ամյակին: Բանախոսները ՊԲ սպաներ էին, հերոսի զինակիցներ, իսկ աշակերտները ներկայացրին հուշ-ցերեկույթ:

Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցում 9-րդ դասարանի աշակերտների համար արհուրյան դաս անցկացրին կրթության շեֆ-գործակալի սպաները: Ներկա էին մարտիկ, Արցախյան պատերազմի մասնակից Կարո Չամբարձումյանը: Ենթասպա Մխիթար Շահրամանյանը ներկայացրեց հերոսի կյանքն ու գործունեությունը՝ պատանի, ուսանող, գիտնական, ազգային-ազատագրական պայքարի մարտիկ, Արցախյան պատերազմի լեգենդար զորահրամանատար Մոնթե Մելքոնյանին, որն իր կարճ կյանքի ընթացքում կարողացավ խոր հետք թողնել հայոց նորագույն պատմության մեջ:

Կապիտան Արտուշ Ավետիսյանը պատմեց, թե ինչ դեր է ունեցել Մոնթեն իր կյանքում և ներկայացրեց երկու դրվագ նրա հետ ունեցած հանդիպումից: 11 տարեկան էր, երբ իր հայրենի խնամապատ գյուղում 1991թ. առաջին անգամ տեսավ լեգենդար հրամանատարին: Ասում է՝ հենց առաջին հայացքից գզացել է նրա մեծությունը ոչ միայն որպես կռվող մարտիկ, հերոսի, այլև մեծ գաղափարի տեր անհատի, որն օժտված է մեծ հայ լինելու բացառիկ հատկանիշներով:

1993թ. երկրորդ անգամ տեսավ նրան իրենց տանը՝ ընտանիքի բարեկամ, Եմիշձան գյուղից հայտնի տանկիստ Լավրենտ Շունանյանի հետ: Ավոյի ազդեցիկ դիմագծերը, խորաթափանց հայացքը խոր տպավորություն թողեցին պատանու վրա, և նա մի ճեպանկար արեց, որը մինչ այսօր կախված է իր զխավերում: Ավոն, տեսնելով նկարը, թփփախեց և տղայի մեջքին՝ հարցնելով՝ կշարունակե՞ս իր գործը, կդառնա՞ս հայրենիքի պաշտպան: Տղան երդվեց, որ կդառնա, և արդեն 22 տարի է՝ ծառայում է Հայոց բանակում և հպարտ է, որ կատա-

րում է Ավոյին տված երդումը: Նա հորդորեց պատանիներին՝ դառնալ հայրենիքի պաշտպաններ, շարունակել Ավոյի գործը, որը կասեր՝ «Իմ կենացը մի՛ խմեք, իմ գործը շարունակեք»:

Կապիտանը մաղթեց դպրոցականներին լինել առույգ, ապրել իրենց առօրյա յով, բայց չմոռանալ տղաների



սխարհները, քանզի եթե մոռանանք, ուրեմն ինքներս մեզ կմոռանանք: Նա հիշեցրեց Դարեհի խոսքը՝ հայերին ջախջախել հնարավոր չէ, բայց հնարավոր է իրարից գատել: Ուրեմն՝ եթե միահամուռ ենք, անպարտ ենք, եթե գատվենք, պարտված ենք: Հայն այն ժամանակ է ուժեղ, երբ համախմբված է: Անցյալ տար-

Մխիթար սպարապետին: Նրա զավակները խնդրում են սպարապետին՝ թույլ տալ հոր դին հանձնել հողին: Մխիթարը պատասխանել է՝ դավաճանին հող չի հասնում:

Մեր հողը պիտի շարունակենք պաշտպանել, քանի որ մեր հարևանը թուրքն է: Իսկ թուրքն իր ձեռագիրը չի փոխում, անցնեն դարեր էլ, չի փոխի: Կապիտանը պատից լսած մի գրույց էլ պատմեց: Նա թուրք ընկերոջ հետ ճանապարհ էր գնում: Թուրքը, որ հետևից էր քայլում, ասաց՝ Միքայել, իմ հետևից արի: Ինչո՞ւ՝ հարցրել է պատել: Ասել է՝ չնայած որ հացդ կտրել եմ, ես թուրք եմ, քո հետևից կսփեմ, բայց գիտեմ, որ հայը հետևից երբեք չի խփի: Սա թուրքն է խոստովանել:

«Ինչքան էլ որ դժվար լինի ապրուստը, մեր հողում ապրենք, իսկ լավ ապրելն ուտել-խմելը, պճնված ման գալը չէ, այլ երկրում արարելն ու այն պաշտպանելը»,- խորհուրդ տվեց կապիտանը:

Արիության դասին հաջորդեց 5-րդ «ա» դասարանի կողմից ցուցադրված հուշ-ցերեկույթը՝ «Ճանաչենք մեր հերոսներին, ճանաչենք ինքներս մեզ» խորագրով: Այն կազմակերպել էր պատմության ուսուցչուհի Ժամնե Աբրահամյանը: Երեխաների շուրթերով հնչեցին Մոնթեի մտքերը, որ թևավոր արտահայտություններ են դարձել. «Ես երդում տված եմ և կպատկանամ մեկ մարդու, այդ մարդը հայրենիքի ազատության գինվորն է», «...Իմ նպատակն է կռվել Արցախի հաղթանակի համար, հանուն որի կյանքս ալ անգամ չեմ խնայեք»: «Շատ նորմալ բան է, որ հայը գա ու իր հայրենիքը պաշտպանե, իրավունքն է բոլորին ու նաև պարտականությունը»: «Մերունը պետք է դաստիարակել գաղափարներով, այլ ոչ թե բռնարարներով», «Ղեկավարի պարկեշտ պահվածքն ու ենթակային անձնական օրինակով ուղղորդելու կարողությունը մարտունակ և բարոյապես ամուր գինվորի դաստիարակության նախապայմաններից են», «Դժվար էր մեր ուղին, բայց նպատակը վեհ էր... իսկ դեպի վեհ նպատակ տանող ուղին հաղթանակ է» և այլն:

Դպրոցականները մեծարեցին հերոսին, նրա մասին երգեր, բանաստեղծություններ արտասանեցին:

Հուշ-ցերեկույթն ավարտվելուց հետո դպրոցի փառքի սրահում բոլոր հինգերորդիկները հանդիսավոր երդում տալով՝ մտան Մ. Մելքոնյանի անվան «Ձարթոնք» մանկապատանեկան կազմակերպության արժույթի շարքերը:

Լ. ՎԱՐԻԵՆՅԱՆ

ՄՈՆԹԵ ՄԵԼԵՈՆՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԼԵԳԵՆԴ...

Ինչպես որ Արցախի և Խորհրդային Հայաստանի ժողովուրդը զանգվածաբար մասնակցում է մեր հայրենիքի վերամիավորման նախաձեռնությանը, մասնապես մենք Սփյուռքում պետք է պայքարենք հանուն մեր իրավունքի՝ ապրելու մեր հայրենիքի այն հատվածում, որն ընկած է Խորհրդային ներկա սահմաններից դուրս: Արցախի մեր հայրենակիցները փայլուն օրինակ են, որին մենք պարտավոր ենք հետևել»:

1989թ. սկզբին՝ շուրջ երեք տարվա բանտարկությունից հետո, Մոնթեն ազատ արձակվեց: Քանի որ ֆրանսիական դատարանի վճռով նա դատապարտված էր նաև արտաքսման, ուստի տեղափոխվեց նախ Հարավային Եմեն, իսկ այնուհետև՝ Արևելյան Եվրոպա, որտեղից 1990թ. հոկտեմբերին անցավ փոթորկված Հայաստան...

1991թ. սկզբներին նա մի քանի անգամ եղավ հայ-ադրբեջանական սահմանի թեժ կետերում, մասնավորապես մասնակցեց Տավուշի հատվածում տեղի ունեցող պաշտպանական մարտերին: Դրան գուզահեռ, միաժամանակ, զբաղվում էր նաև գիտական աշխատանքով: 1991թ. փետրվարից մինչև սեպտեմբեր ամիսը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի մի շարք մասնագետների հետ Մելքոնյանն աշխատեց «Հայաստանը և իր հարևանները» ծավալուն ուսումնասիրության վրա: Այդ ընթացքում նա հասցրեց նաև ամուսնանալ: Սեդայի հետ նրանց ամուսնական ծխակատարությունը տեղի ունեցավ 1991-ի օգոստոսին Գեղարդավանքում: Իսկ արդեն սեպտեմբերին կամավոր մեկնեց գործող ռազմաճակատ: Արցախյան ճակատում նրա մարտական կենսագրության անդրանիկ էջերը գրվեցին Շահումյանի շրջանում: Այստեղ էլ առաջին անգամ Մոնթեն հանդես եկավ «Ավո» ծածկանվան տակ: Շուրջ երեք ամիս նա մնաց Հյուսիսային Արցախում, մասնակցեց Բուզլուխի, Մանաշիդի, Էրթեջի և մյուս գյուղերի համար մղված պաշտպանական մարտերին: «Ես Միացյալ Նահանգներից եկած հայ եմ և այստեղ պայքարում եմ նույն պատճառով, ինչի համար պայքարում են մնացյալ բոլորը: Ես հայ եմ, այս հայրենիքը պատկանում է ինձ նույնքան, որքան որևէ ուրիշ հայի: Կարծում եմ՝ իմ հայրենիքի այս կտորի պաշտպանության համար նաև կրում եմ նույնքան պատասխանատվություն, որքան ցանկացած հայ: Հետևաբար, բնական է լինել այստեղ և պայքարել այս շրջանի ամբողջ բնակչության հետ միասին», - այսպես էր նա հիմնավորում իր ներկայությունը պայքարող Արցախում:

1991թ. դեկտեմբերին վերադաս հրամանատարության հրամանով Մոնթեն վերադարձավ Երևան, որտեղից էլ գործուղվեց Իջևանի շրջան՝ մասնակցելու սահմանային գոտում ընթացող պաշտպանական մարտերին: Իսկ արդեն 1992թ. փետրվարին նա կրկին Արցախում էր: Այստեղ նրան վստահվեց Մարտունու շրջանում տարանջատ գործող ինքնապաշտպանական ջոկատների միավորման և կանոնավոր զինուժի ստեղծման հիրավի պատասխանատու գործը: Որքան էլ այսօր անհավատալի թվա, բայց և այնպես նորանշանակ հրամանատարի մուտքը Մարտունու մի սկզբնական շրջանում ոչ բոլորի կողմից արժանացավ միանշանակ ընդունելության: Հատկապես անհանդուրժողականություն դրսևորեցին այն ջոկատների հրամանատարները, որոնք մինչ այդ տեղային նշանակության մեկ-երկու մարտերում հասել էին որոշակի հաջողության և իրենց համարելով փորձված «գորապետ»՝ ոչ մի կերպ չէին ուզում համակերպվել նոր դրվածքին և գործել ընդհանուր հրամանատարության ներքո:

Ձինյալ պայքարի փորձառությանը թոժված Ավոյի համար ստեղծված իրավիճակից դուրս գալը սոսկ ժամանակի խնդիր էր: Դրությունը շտկելու նպատակով անհրաժեշտ եղավ ոչ այնքան վերադասի միջամտությունը, որքան բնակչության շրջանում համապատասխան գաղափարական աշխատանքի ծավալումը: Ամենակարճ ժամանակահատվածում, շնորհիվ իր մարդկային ու ռազմագիտական բարձր որակների, նա կարողացավ վաստակել տեղի զինվորականության և քաղաքացիական բնակչության բացարձակ մեծամասնության հարգանքն ու վստահությունը: Ավո անունը մարդկանց համար դարձավ արդարության, ազնվության և անմիջականության խորհրդանիշ: Նա և՛ խրամատուն էր, և՛ ժողովրդի մեջ: Ձինվորի հետ զինվոր էր, գյուղացու հետ՝ գյուղացի, մտավորականի հետ՝ մտավորական: Գիտեր խղճալ, ներել, բայց անհրաժեշտության դեպքում նաև անխնա պատժել: Սա էր նրա մոտեցումը, և այն շատ շուտով տվեց իր դրական արդյունքները:

Այո, նա այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի գիտակցում էր, որ միայն պայծառությամբ, հավատով, նվիրումով և կարգապահությամբ է հնարավոր հասնել հաջողության: Եվ Մոնթեն իր զինվորներին սովորեցրեց լինել օրինապահ, հարգել կարգ ու կանոնը և անել այն, ինչը հնարավոր կդարձներ օր առաջ հասնել բաղձալի հաղթանակին: Շնորհիվ Ավոյի համառ ջանքերի և խստապահանջության՝ հաշվված ամիսների ընթացքում իր իսկ գլխավորած գործառն դարձավ Պաշտպանության բանակի ամենամարտունակ ստորաբաժանումներից մեկը, իսկ Մարտունու պաշտպանական հատվածը՝ հանրապետության թերևս ամենամասնաշիկ ու անխոցելի սահմանային գոտին:

ԱՆՈՒՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ

1988թ. արցախյան զարթոնքը օրինաչափ էր ու ակնկալելի: Հրապարակներում բռունցքված ցասման չափն ըմբռնելի չէր նախապես: Իսկ երբ քաղաքականություններից հալածված ազատության գաղափարը հրապարակ իջավ, պարզ դարձավ մի բան՝ ժողովրդի ցասման առաջ անգոր է ամեն մի իշխանական ուժ: Եթե ժողովուրդն է փոթորկվում, ուրեմն հերոսներ ծնվելու ժամանակն է: Հերոսներ, որոնք ծնվում են լոկ պայքարելու համար: Սկզբում նրանք քիչ էին, մնան լեռներից վայր իջնող մաքրաջուր գետակի, որ պիտի ներառեր իր մեջ լեռներին աղբյուրների ուրիշ ջրեր ու գետ դառնալով՝ հզոր ու անկասելի հորդեր դեպի նպատակի մեծ ծովը:

Այդպիսի հերոսներ են Արցախյան գոյամարտում նահատակված մեր կենդանի

զավակները: Արցախյան պատերազմը շատ զոհեր տվեց: Հավիտենության ճամփան բռնեցին հազարավոր հայորդիներ՝ հայրենիքի փրկության գոհասեղանին դնելով իրենց երիտասարդ կյանքը: Նրանց շարքում էր նաև Ավոն:

Նոյեմբերի 25-ին Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում նշվեց ՀՀ և ԼՂՀ ազգային հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Մոնթե Մելքոնյանի ծննդյան 60-ամյակը:

Միջոցառման սկզբում Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Մինասյանը մանրամասնորեն պատմեց մեծ հայրենասերի կյանքի ու անցած դժվարին ճանապարհի մասին: Այնուհետև ցուցադրվեց գեղեցիկ ֆիլմ՝ նվիրված գաղափարի հերոսին:

Ավոն հայ ժողովրդի ազատագրական պայքարի լավագույն գորավարներից է: Լինելով Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ջոկատների հրամանատարը՝ նա մեծ ավանդ ունեցավ նորաստեղծ հանրապետության բանակի ստեղծման, նրա պաշտպանականության ամրապնդման, ազերի թուրքերից երկրամասը պաշտպանելու գործում: Ավոյի անունը սրբություն է յուրաքանչյուր արցախցու համար, խորհրդանիշ՝ պայծառ հայրենասիրության, ազնվության ու սխրանքի:

**Մարինե ԿԱՐՎԵՏՅԱՆ**  
**«Հաղորդի Ա. Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան»**  
**ՊՈՒԿ-ի փնտրեն, պարմության ուսուցչուհի**



ԱՐԵՎԻԿԱ ՆԵՐՈՍՆԵՐ

ՄՈՆԹ ՄԵԼՈՆՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԼԵԳԵՆԴ...

3 Լեգենդար զորահրամատարի ղեկավարած գունդը սեղմ ժամկետում ոչ միայն վնասազերծեց շրջանին մերձակա բռնամական խոշոր ռազմակետերը, այլև ակտիվ մասնակցություն ունեցավ միջանցքի պաշտպանության, Մարտակերտի բռնազավթված տարածքների ազատագրման, Քարվաճառի և Աղդամի շրջանի հարավարևմտյան ռազմակայանների ոչնչացման մարտերին: Հատկապես անուրանալի է Քարվաճառի օպերացիայում Մոնթեի բերած ավանդը: Հանդիսանալով այդ ռազմագործողության ընդհանուր ղեկավարը՝ նա այստեղ ցուցադրեց իր ռազմավարական ու մարտավարական բարձր ընդունակությունները և ոչ միայն... Հենց այստեղ էր նաև, որ դրսևորվեցին Մոնթե-զորավարի ասպետական բարձր հատկանիշները ոչ միայն յուրայինների, այլև մարդու հանդեպ ընդհանրապես: Ավանդ վառ ապացույցն է շրջափակման մեջ հայտնված Քարվաճառի թշնամական զինուժի հանդեպ զորահրամատարի ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքը: Մոնթեն վերջիններիս առաջարկեց գեները վայր դնել և փոխարենը ստանալ մարտադաշտից անարգել դուրս գալու հնարավորություն: Այնինչ, Արթուրյանի ռազմական գերատեսչության ղեկավարությունը, հակառակ հայ հրամանատարի դրսևորած մարդասիրության, սեփական զինվորի հանդեպ դրսևորեց անխնայ վերաբերմունք՝ նրան թույլ չտալով կատարել այն, ինչը տվյալ պարագայում կլիներ միակ խիստ քայլը: Բայց և այնպես, այդ քանից հետո անգամ Ավոն մնաց իր բարձրության վրա: Նրա հրամանով խաղաղ բնակչությանն ու մարտադաշտը ինքնակամ թողնող զինվորներին տրամադրվեց անվտանգ ելքի հնարավորություն... Ինչ խոսք, այդպես կարող էր վարվել միայն մեծը, հենց նա՝ Մոնթե Մելքոնյանը, ով հայրենիքը սիրելու չափ հարգում էր նաև բարոյական արժեքները:

1993թ. հունիսի 12-ին Մարտունու և Աղդամի սահմանագծում տեղակայված թշնամական ռազմահենակետերի վերացման մարտական գործողությունը Ավոյի համար թերևս վերջինն էր: Այդ օրը Մոնթեն զբաղեցրեց առաջնային ղեկավարման կետը և գիշերվա ժամը 3-ն անց 30-ին օպերացիայում ներգրավված ստորաբաժանումների հրամանատարների հետ կապի դուրս գալով՝ վերջնականապես ճշտեց զորքերի մարտական պատրաստակամության վիճակը: Ձեկույցները լսելուց հետո հրամայեց գրահատելու հիկան առաջ շարժել: Գրոհը սկսելուց մի քանի ժամ անց հարավ-արևելյան ուղղությամբ գործող դարաբարայան ուժերին հաջողվեց կտրել հակառակորդի դիմադրությունը, ընթացքից ոչնչացնել թշնամական մի քանի հենակետեր և մտնել Մարզիլու գյուղ: Մարտական գործողությունների ընթացքում շարքից հանվեց հակառակորդի 4 հրասայլ, 1 ՋՄԱ և մեկ «Շտուրմ-4» հակատանկային միջոց: Մեծաթիվ էին նաև կենդանի ուժի կորուստները:

Մարտադաշտում ստեղծված իրադրությանը մոտիկից ծանոթանալու և առաջիկա անելիքները ճշտելու նպատակով Մոնթեն որոշեց թողնել հրամանատարական կետը և բարձունքից իջնել տղաների մոտ: Իր չորս զինակիցների հետ միասին մեքենայով անցնում էր դատարկված Մարզիլուի միջով, զինվորներին հանդիպելով՝ ավտոն կանգնեցնում էր, հետները գրուցում, հարցնում նրանց որպիսությունը և առաջ շարժվում... Վերջին գրուցակիցը ՊՇ-ի շտաբի պետն էր, ասաց՝ գնում են Բերդաշենի գումարտակի հրամանատարի մոտ՝ դիրքեր... և շարժվեց առաջ: Քիչ անց հրամանատարի հետ կապվեց Բերդաշենի գումարտակի հրամանատար Նելսոն Սողոմոնյանը: Չէր հասցրել լրիվությամբ ավարտել իր ասելիքը, երբ կապն ընդհատվեց... Ոչ ոքի մտքով չէր անցնում, որ այդ պահին լեգենդար հրամանատարը հայտնվել էր նահանջող հակառակորդի ուժերից ետ մնացած ազերական գրահատելիկայի կրակային խոցման թիրախում և... ուր որ է՝ Ավոյի զինվորն իրեն կզգար որք ու առանց զորավարի...

Նա գործեց հանդուժողների թելադրանքով ու միշտ էլ մնաց ՉԿՄԿՄԻ ԶԽՆՎՈՐ: Նրա հայացքներն ու փիլիսոփայական ընկալումները, որ գալիս էին հազարամյակների պատմություն ունեցող Հայկական բարձրավանդակից, անցնում է համաշխարհային քաղաքակրթության դարավոր ոլորաններով և վերափոխազդվում էր իր ապրած ժամանակի գործընթացի, նպատակաուղղված էին միայն ու միայն մեկ կետի՝ հայրենիքը տեսնել իր պատմական սահմանների մեջ: Եվ նա հավատում էր այդ օրվա գալուստին... Հավատում էր, որովհետև համոզված էր, որ վաղ թե ուշ յուրաքանչյուր պարկեշտ հայ անելու է այն, ինչ ինքն է անում: Իսկ նրա արածների հիմքում ընկած էր սոսկ մեկ ճշմարտություն՝ ամեն բանից առաջ մնալ հայ...

1993թ. օգոստոսի 10-ին նրան առաջինը շնորհվեց ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշան, 1996թ. սեպտեմբերի 20-ին արժանացավ ՀՀ ազգային հերոսի, 1999թ. սեպտեմբերի 2-ին՝ Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ կոչումներին: ...Սակայն Մոնթե Մելքոնյանի անձնաբարձր պարզևն այն է, որ ինքն ապրում է և ապրելու է աշխարհասփյուռ հայության հոգում՝ այսօր և բոլոր ժամանակներում:

Ըստ ԼՂՀ ՊԲ նյութերի

ՄՈՆԹ ՄԵԼՈՆՅԱՆ՝ ԲԱՅՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ...

Արցախյան գոյամարտը հայոց պատմության լուսավոր էջերում անմահացավ՝ թողնելով ազգանվեր մի շարք անուններ: Այդ անմահներից է լեգենդար Ավոն: Մարդ, որ դեռևս իր կենդանության օրոք դարձավ լեգենդ: Մարդ, որ Արցախ եկավ հեռավոր Ամերիկայից հայրենիքի կանչով՝ սրտում ունենալով անափ սեր Արցախի հանդեպ, իսկ աչքերում՝ նախնիների պատմական հայրենիքի հանդեպ կսկծացող, թանձր կարոտ: Եկավ՝ իր կյանքը շաղախելով հող հայրենիի հետ՝ դառնալով ընդմիշտ քայլող հիշողություն:

Նոյեմբերի 25-ին Շոշի Ա.Արահամյանի անվան միջնակարգ դպրոցում յուրահատուկ օր էր: Դպրոցում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված անմահ Մոնթե Մելքոնյանի 60 - ամյակին: Ներկա էին Շոշի միջնակարգ դպրոցի կցված ՀՕՊ գնդի ԱՀՏԱԳՀՏ փոխգնդապետ Է.Փաթյանը, մայր Ա. Սարգսյանը, զինվորներ, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներ: Հնչեց Արցախի օրհներգը, որից հետո բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Հ.Հարությունյանը: Ավոյի կենսագրության և անցած փառավոր մարտական ուղու վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ մայր Ա. Սարգսյանը:

Միջոցառման երկրորդ մասը համեմված էր աշակերտների գրական-գեղարվեստական ելույթով: Հուշ-ցերեկույթի ընթացքում աշակերտները մեծաթեցին լեգենդար հերոսին: Անչափ հուզիչ էր երեխաների խոսքը, երբ երգվեցին լինել Ավոյի նման հերոսների արժանի ժառանգորդը, կյանքի գնով անխոցելի և հզոր պահել հայրենիքի հրե վահանը, միշտ առաջ գնալ հայոց սրբազույն եռագույնով:

Միջոցառման երրորդ մասը ինտելեկտուալ խաղ էր: Մրցում էին զինվորներից և աշակերտներից կազմված «Քիրս» և «Մռով» թիմերը: Ընդգրկված բազմաբովանդակ հարցերին մասնակիցները փայլուն պատասխանեցին՝ դրսևորելով բարձր ինտելեկտ, մտքի ճկունություն:



Խաղի ընթացքում ցուցաբերած փայլուն գիտելիքների շնորհիվ երկու թիմերն էլ տնօրենության կողմից պարգևատրվեցին արժեքավոր նվերներով:

Վերջում անցկացվեցին սպորտային խաղեր՝ վազք, ցատկ, ձգումներ: Մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների անունից շնորհակալական խոսք ասաց դպրոցի տնօրեն Հ. Հարությունյանը՝ ընդգծելով այն վեհ գաղափարը, որ հերոսներին մեծաթելն ու ոգեկոչելը ողջերիս սրբազան պարտքն է, որ պետք է մշտապես զգոն լինենք նենգ թշնամու ամեն մի ոտնձգության հանդեպ, պետք է Ավոյի նման խիզախ հայրենասեր, հմուտ ու կիրք անձնավորություն լինենք, միշտ միաբանված բարձր պահենք հայրենիքի շահը, քանզի մենք ուժեղ ենք, երբ միասին ենք:

Ելույթ ունեցավ նաև փոխգնդապետ Է. Փաթյանը: Նա շնորհակալություն հայտնեց ջերմ հյուրընկալության, հագեցած օրվա համար, հավաստիացրեց, որ Արցախի անվտանգությունը հուսալի, ուժեղ և հայրենամեծ գավակների ձեռքերում է, իսկ աշակերտներին խորհուրդ տվեց լինել կարգապահ, խելացի, քանզի Արցախին այսօր առավել թան էրբեք պետք են բարձր գիտակցությամբ, ֆիզիկական ամուր կոփվածությամբ, վառ հայրենասիրությամբ օժտված քաղաքացիներ:

Հույս ունենանք, որ բանակդպրոց փոխադարձ այցելությունները շարունակական բնույթ կկրեն, քանի որ այսպիսի միջոցառումները արիության ուսանելի դասեր են: Դրանք նպաստում են մատաղ սերնդի ռազմահայրենասիրական, բարոյահոգեբանական դաստիարակությանը: Հենց դպրոցն է այն դարբնոցը, որտեղ աշակերտը կոփվում է թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես, գիտակցում է վաղը հայրենիքի պաշտպանությանը իր արժանի մարդ դառնալը: Ուրեմն, ազգովի լծվենք սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության սրբազան գործին, թանկ գնահատենք այն, ինչ ձեռք բերվեց բազում հայրողիների հեղած արյան գնով: Հավերժ փառք նրանց, ովքեր Արցախի երկնակամարը հաղթանակի դափնիներով պսակեցին:

**Ա. ՄԵԼՈՆՅԱՆ**  
**Շոշի Սարգիս Արահամյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեգի եւ գրականության ուսուցչուհի**

ՈՐԲԵՐՍ ԱՐԱՋՅԱՆԻՆ (գրված, բայց չընթերցված նամակ)

**Նոյեմբերի 16-ին Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Ռոբերտ Աբաջյանը կդառնար 21 տարեկան...**

Հետաքրքիր է, թե մասին անցյալ ժամանակով չեմ խոսում: 20 տարեկանդ չբոլորած՝ արդեն հասցրիր նվաճել բոլորիս սրտերը: Թո ժպիտը, խիզախությունը, պատասխանատվությունը, պատրաստակամությունը, նվիրվածությունն ու անկոտրում կամքը... Այս շարքը կարելի է երկար շարունակել: Ափսոսանք են զգում, թե հիացմունք, չգիտեմ, գիտեմ միայն, որ հայրենասիրության, ազնվության ու նվիրվածության, խիզախության ու համարձակության որակներ ձևավորելու համար հայ ուսուցիչը, արցախցի ուսուցիչը հատկապես, կերպարներ և օրինակներ որոնելու խնդիր չունի: Ցավով ասեմ, թե հպարտությամբ, Դու համալրեցիր հայ նվիրյալների շարքերը: Ամեն անգամ թո մասին լսելիս կամ ընթերցելիս մայրական հոգատարության զգացումով են համակվում: Պարտքի խորը զգացում ունեն թո նկատմամբ: Եվ միայն ես չեմ, բոլորս՝ մեծից փոքր, փոքրից մեծ: Գո՛ւցե թե այդ պարտքի զգացումից է, որ որոշեցինք աստղիկների ու արծիվիկների երգման արարողությունը կազմակերպել ծննդյանդ

օրը: Գիտեմք, որ շատ համեստ ես, պարզապես ուզում էինք մեկ անգամ ևս զգալ թո ներկայությունը... Հինգերորդի Մուրադը շունչը պահած պատմում է այն մասին, թե Դու ինչպես մարտական խորշում դիրքավորվելով՝ մինչև վերջին փամփուշտը շարունակեցիր միայնակ կռվել թշնամու մեծաթիվ ուժերի դեմ՝ միևնույն ժամանակ կապ հաստատելով գումարտակի հրամանատարի հետ և վերջինիս կարևոր տեղեկություններ հաղորդելով դիրքում կատարվող դեպքերի



մասին: Իսկ թո վերջին նռնակի պայթյունը թվում է՝ ամեն օր մեր ականջներում է ու զգոնության հորդոր է ամուր ոչ միայն սահմանում կանգնածին, այլ նաև մեզ՝ ուսուցիչներին, որովհետև խաղաղության համար պայքարը միայն սահմանի վրա չէ, այլ կրթօջախներում, մեր մտքերում ու սրտում:

Հինգերորդի Մանեն առանձին ոգևորությամբ ներկայացնում է թո՝ «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագույն կոչմանն արժանանալու և «Ոսկե արծիվ» շքանշանով պարգևատրվելու մասին: Առաջին դասարանցիները աստղիկներ, իսկ հինգերորդիները՝ արծիվիկներ դառնալու երդումը տվեցին, խոստացան ունենալ թո ազնվությունը, նվիրվածությունն ու քաջությունը, խիզախությունն ու կոռովը: Բոլորը յուրովի երգեցին թո գովքը: Մեկը՝ բանաստեղծությամբ, մյուսը՝ երգով Քեզանից էին խոսում, Արցախի հանդերում ու ձորերում սավառնող թո հմայքի ու փառքի մասին:

Փառք Քեզ, վառ ու լուսավոր տղա: Մայրաբար են մտնում: Շնորհակալ ենք Քեզ, ծնողներդ, ուսուցիչներդ: Դու մեր օրերի հերոսն ես: Ոսկե արծիվ: Ժպիտդ կրկին արծազանք է տալիս և ասում. ամեն ինչ անցողիկ է. ապրել է պետք անանձնական երջանկությամբ ու նվիրվածությամբ: Շնորհավո՛ր ծնունդդ, քաջորդի: Դու միշտ կենդանի ես, քանի որ անչեչ կրակ ես վառել բոլորիս սրտում մեծից՝ փոքր, փոքրի՛ց մեծ:

**Իրինա ՂԱՐԱԽԱՆՅԱՆ**  
**Սպեֆանակերպի հ.12 հիմն. դպրոցի դասվար**

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՇՆՈՂԱԿԱՆ ՀԱՐԱԹ «ԹՈՒՄՈՒ»-ՈՒՄ

Ստեփանակերտի «Թուժո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը հաճախում են հազարից ավելի երեխաներ մայրաքաղաքից և հանրապետության շրջանների գյուղերից: Բացի նրանից, որ ծնողները «Թուժո»-ում ժամանակ առ ժամանակ ներկա են լինում իրենց երեխաների աշխատանքների արդյունքների շնորհանդեսին, տարեկան մեկ անգամ նրանց համար կազմակերպվում է ծնողական շաբաթ (ներկայանում են հերթով՝ համապատասխան ժամանակացույցով), որտեղ «Թուժո»-ի ղեկավար Կորյուն Խաչատրյանը պարզաբանում է կենտրոնի աշխատանքը, նպատակները, պատասխանում ծնողների հարցերին ու ստահոգություններին: Ծնողները հնարավորություն ունեն ծանոթանալ կենտրոնի հարթակներում երեխաների պարականոնների ընթացքին ու արդյունքներին: Այդպիսի մի ծնողական շաբաթի ներկա էր «Լուսարար»-ը:

Եվ այսպես՝ ծնողական շաբաթն անցկացնում է Ստեփանակերտի «Թուժո» կենտրոնի ղեկավար Կորյուն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

Շատերին է հայտնի, թե «Թուժո»-ում ինչով են զբաղվում, ինչ մասնագիտություններ կան. ծրագրավորում, ռոբոտաշինություն, անիմացիա, նոր մեդիա, խաղեր, կայքեր և այլն (կա 14 մասնագիտություն): Բայց բոլորը չէ, որ գիտեն, թե այդ ամենը ինչպես է մատուցվում, ինչպես են սովորեցնում երեխաներին:

**Ինչպես** -ը «Թուժո»-ում կոչվում է կրթական ընթացք. ինչպես է այդ ամենը կազմակերպվում, որպեսզի ուսանողը («Թուժո»-ում այդպես են կոչում հաճախող երեխաներին) հասնի իր առավելագույն ներուժին:

Կա երեք ձևաչափ: Դրանք բավական բարդ են ու յուրահատուկ՝ ինքնուսուցում, դասընթացներ, աշխատարան:

**Ինքնուսուցում** - հայերեն նշանակում է՝ ինքնուրույն ուսուցում: Բարդ գործընթաց է: Բարդ է ծնողի համար, բարդ է «Թուժո»-ի ղեկավարի համար՝ որպես մանկավարժ և շատ բարդ է երեխայի համար: Ինչո՞ւ է բարդ: Որովհետև, կարելի է ասել, ինչ-որ չափով հակաստեմ է. կրթական համակարգը մի ձևով է աշխատում, «Թուժո»-ն՝ մեկ այլ: Դպրոցում սովորաբար երեխային ասում են՝ **ինչ անել** և **ինչպես անել**: Ինչ-ը և **ինչպես**-ը նրա համար պարզ ու հստակ տրված են: «Թուժո»-ում մի քիչ տարբեր է: Այստեղ երեխային ազատությամբ մեջ են դնում, նրան չեն ասում՝ սա պիտի անես, այլ ասում են՝ ինչ ուզում ես արա:

Դա՝ 1-ին ազատությունը:

2-րդ. կա ինքնուրույն աշխատանքի հնարավորություն: Սովորողն ինքնուրույն պետք է կարողանա հաղթահարել իր դժվարությունները. ինքնուրույն կողմնորոշվի, հարցերին ինքնուրույն պատասխանի, ինքնուրույն տիրապետի, ընկալի, յուրացնի գիտելիքը: Դա ամենից բարդ կրթական հայեցակարգն է:

Ինքնուսուցման երեխաները գալիս են շաբաթը մեկ անգամ: Ծնողները պետք է իմանան, որ եթե իրենց երեխան «Թուժո» գալիս է շաբաթը մեկ, նշանակում է՝ նա ինքնուսուցման, վարժանքի մեջ է, անընդհատ վարժվում է: Երեխան ինքն է ընտրում՝ որ վարժանքն անի և ինչպես է ուզում, իր ռիթմով է առաջ գնում: Նա ունի օգնական, ավագ ընկեր, որն իրեն ուղղորդում և օգնում է. դա ուսուցանող մարզիչն է: Երբեմն երեխան դժգոհում է, որ ինքը մարզիչին դիմեց, բայց նա չօգնեց: Ի՞նչ է նշանակում օգնել: Չիմացիները մի լավ ասացվածք ունեն. «Եթե ուզում ես մեկին օգնած լինել. նրան ոչ թե ձուկ տուր, այլ ձկնորսություն սովորեցրու»: «Թուժո»-ում այս հայեցակարգով են առաջնորդվում, այսինքն՝ ուսուցանող մարզիչն ուսանողին ոչ թե պատասխան է տալիս, այլ սովորեցնում է ինքնուրույն գտնել պատասխանը: Եթե պատասխանը տա, երեխան կսովորի, հետո նորից պատասխանը կպահանջի: «Թուժո»-ում երեխային **սովորեցնում են սովորել**:

Սովորեցնել սովորելն ամենից բարդ

հայեցակարգերից մեկն է. երեխային հասցնում են այն գիտակցության, թե ինչի համար է եկել «Թուժո»: Գիշտ է, նա սիրում է, ուզում է հաճախել, այստեղ հետաքրքիր է, բայց պետք է գիտակցի, որ իր անձնական աճը, զարգացումն ապահովելու համար է գալիս, իր կարիերան է սկսում գծել: Նա կողմնորոշվում է կյանքում՝ ինչ է ինքը սիրում: «Թուժո»-ում երեխաներին համբերատար գիտակցության են հասցնում, դրա համար ինքնուսուցումը ժամանակ է ուզում ու համբերություն պահանջում: Ֆրանսիացիներն ասում են՝ ժամանակ տալ ժամանակին: Այսինքն՝ թողեք, որ ժամանակն իր դերը կատարի: Երբեմն երեխաները չեն հասկանում՝ զալիս, գնում են, չեն հասկանում՝ սովորո՞ւմ են, թե՞ չեն սովորում: Նույն բանն էլ ծնողներն են զգում ու հարցնում են՝ այդքան գնում-զալիս ես, ի՞նչ ես սովորել: Այս փուլում երեխան պիտի հասնի գիտակցության, որ վաղը-մյուս օրն ինքնուրույն պետք է անի ամեն ինչ, ինքնավստահ, երկու ոտքի վրա ամուր կանգնած պիտի լինի. հասկանա, որ եթե վաղը դժվարության առաջ կանգնի, մենակ պետք է հաղթահարի, ինքնուրույն: Դա արդեն հաղթանակ է ծնողներին և ուսուցանող մանկավարժներին համար: Իհարկե, նրանք կարևոր դեր ունեն երեխայի կյանքում, բայց ինքնուսուցման սկզբունքը սա է:

Երեխաները գալիս են «Թուժո» ու այստեղ էլ շարունակում իրենց առօրյա սխալները. կրկնօրինակում են՝ արտագրում: Սովորույթ է: «Թուժո»-ում չեն պատժում երեխային, չեն գողում վրան, նստում են նրա կողքին, համբերատար բացատրում, ասում. «Գիտե՞ս, դու ինքը քեզ ես խաբում, ժամանակդ կորցնում իզուր, անիմաստ է քո գալը, զնալու ես ասես՝ հայրիկ, այսօր ես մի վարժա՞նք եմ հանձնել: Մենք ուզում ենք, որ գնաս ասես՝ հայրիկ, ես այսօր դիզայնի հետ կապված այսինչ բանը սովորեցի»: Պետք է մեծ համբերությամբ երեխաների գիտակցությանը հասցնել դա: Եվ «Թուժո»-ում այդպես էլ անում են ու նույնն էլ խնդրում ծնողից՝ նրան ևս համբերություն մաղթելով:

Վարժանքի՝ գիտակցության հասնելու փուլը հաղթահարելուց հետո երեխաները հերթով անցնում են հաջորդ փուլերը:

**Դասընթաց**: Դասընթացներն անցկացնում են դասընթացավարները: Այս փուլում երեխաները մենակ չեն, ունեն ուղեկցող: Նրանք լինում են պրոֆեսիոնալներ, որոնք «Թուժո»-ն ժամանում չորս շաբաթը մեկ: Ամիսը մեկ երևանից չորս պրոֆեսիոնալ է գալիս, որոնք մասնագիտի (պրոյեկտ) տեսքով իրականացնում են հետաքրքիր աշխատանքներ իրենց ոլորտի վերաբերյալ: Ուսանողը արդեն գալիս է ոչ թե շաբաթը մեկ անգամ, այլ երկու օր: Մեկ օր՝ իր սովորական ժամին, մյուսը՝ կիրակի:

Դասընթացն ունի երեք **մակարդակ՝ սկսնակ, միջին և առաջադեմ**: Երեխաներն ու ծնողները շատ անհամբեր են. ամեն ինչ ուզում են իսկույն անել, կարծում են, թե պետք է ցատկելով անցնեն այս մակարդակները: Ոչ, պետք է սկսել սկսնակից, հաղթահարել միջին մակարդակը ու անցնել առաջադեմին: «Թուժո» հաճախող արցախցի երեխաների մոտ մի երևույթ է նկատելի. երբ զգում են չեն հասցնի, փախչում են, ուղղակի վախենում են ու փախչում: Երևի ամաչում են, մտածում են, թե վերջում խայտառակ կլինեն: Բայց եթե մի ինչ-որ մակարդակի վրա կանգ առնեն, աշխարհի վերջը չէ. «Թուժո»-ում հնարավորություն են տալիս նորից նստել նույն մակարդակում, որ հաղթահարեն: Երեխան ինքը պիտի հասկանա, թե ինչ մակարդակ է կարողանում հաղթահարել, իրոք տիրապետո՞ւմ է դրան: Շատերը հիասթափվում են, վիրավորվում, թե ինչպես կարող է իր ընկերն անցնել, ինքը՝ ոչ:

Վիրավորվելու բան չկա. ինքը ևս մեկ անգամ պետք ունի դասընթացի: Կան և այնպիսի երեխաներ, որոնք հաղթահարում են տվյալ մակարդակը, բայց ուզում են մնալ, որ ավելի լավ իմանան, քանի որ վստահ չեն իրենց վրա: Այնպես որ, այստեղ էլ համբերություն է պետք, որպեսզի ուսանողները քայլ առ քայլ առաջ գնան: Ոչ մի գնահատական չի դրվում. հաղթահարում է երեխան մակարդակը՝ շատ լավ, չի հաղթահարում՝ մեկ անգամ էլ է մնում այդ մակարդակում:

Ուսանողներին տեղեկացվում է, թե առաջիկա ամիսներին ու տարիներին ինչ դա-



սընթացներ են լինելու «Թուժո»-ում: Ծանոթացնում են հեռանկարային ծրագրերին՝ մինչև 2020 թվականը. իրենց հնարավորություններից կախված՝ այդ դասընթացին մասնակցե՞ն նրանք, թե ոչ:

Վերջին՝ 3-րդ ձևաչափը **աշխատարանն** է: Աշխատարան՝ նշանակում է հատուկ դասընթաց: Հատուկ է, որովհետև երեխաները գալիս են գրեթե ամեն օր, քանի որ մասնագետները վարում են խտացված դասընթացներ: Շատ հաճախ մասնագետները արտերկրից են լինում: Հասկանալի է, նրանք կարծ ժամանակով են գալիս և ուզում են օպտիմալ օգտագործել իրենց ժամանակը:

«Թուժո»-ն ունի **շրջանավարտ** հասկացությունը: «Թուժո»-ի կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտին տրվում է **պորտֆոլիո**:

Պորտֆոլիոն յուրաքանչյուր ուսանողի աշխատանքների հավաքածուն է: Ավարտական մյուս փաստաթղթերից՝ դիպլոմից կամ

ատեստատից սա տարբերվում է նրանով, որ անհատական է: Ամեն մի երեխա այդ ընթացքում ինչ ստեղծում է, մտնում է պորտֆոլիոյի մեջ: Եթե արդյունքները լավ են, պորտֆոլիոն էլ լավը կլինի: «Թուժո»-ցի մի աղջիկ իր պորտֆոլիոն պատրաստելու ժամանակ ցանկություն հայտնեց մի անգամ էլ մասնակցել ֆիլմերի ստեղծմանը. չնայած արդեն հաղթահարել էր երեք մակարդակները, բայց գոհ չէր ինքն իրենից: Ցանկանում էր դիմել Դիլիջանի միջազգային քոլեջ և ուզում էր, որ իր պորտֆոլիոն ավելի լավ, հարուստ լինի: Ուսանողներն ու ծնողները պետք է իմանան, որ պորտֆոլիոյի արժեքը հենց դրա մեջ է. իրենն է, ուրիշ ոչ մեկինը: Անցյալ տարի Արցախից երկու հոգի միջազգային այս քոլեջն ընդունվեցին՝ հենց պորտֆոլիոյի շնորհիվ, իսկ այս տարի 15 հոգի է դիմել, և իրենց պորտֆոլիոյի վրա մեծ աշխատանք են տանում:

Պորտֆոլիո «Թուժո»-ցիները կառուցում են ընթացքում, բայց միայն շրջանավարտներին են տալիս: Շրջանավարտներին «Թուժո»-ն տալիս է նաև մի քանի այլ իրավունքներ կամ արտոնություններ: Առաջին՝ նրանք այլևս չեն գալիս ամեն շաբաթվա ժամանակացույցով՝ շաբաթը մեկ, այլ իրավունք ունեն երբեմն-երբեմն աշխատարաններին մասնակցել, իրավունք ունեն նաև մասնակցել պատվերների, հատուկ նախագծերի: Նրանց նաև հնարավորու-

թյուն է տրվում աշխատել «Թուժո»-ում՝ որպես կամավոր կամ վարձատրվող աշխատող: Իրավունք ունեն մասնագիտական խորհրդատվություն ստանալ լավագույն մասնագետներից, նրանց ներկայացվում է աշխատանքային շուկան, ցույց է տրվում, որ եթե ուզում են խորանալ, ինչ քայլերով պետք է առաջ շարժվեն: Իսկ եթե նրանք ստարտափ (նոր ընկերություն) են ստեղծում, «Թուժո»-ն ամեն ինչով աջակցում է: Կան այդպիսի օրինակներ: Երևանում «Թուժո»-ի ուսանողները խաղի նախագիծ են պատրաստում, կոչվում է «Նետոյի առասպել»: Եվրամիության կողմից դրամաշնորհ են ստացել կես միլիոն դոլարի չափով: Իսկ Գերմանիայում դա ճանաչվել է որպես լավագույն նախագիծ: Հիմա չորս հոգով, որոնք ծանոթացել են «Թուժո»-ում, միապիսին ընկերություն են ստեղծել, անիմացիայի ստուդիա բացել և մի մեծ ֆիլմի վրա են աշխատում:

Մեկ այլ ստարտափ լրատվական դաշտից է: Նրանց առաջին հաճախորդը եղել է «Ամերիա» բանկը: Մի հետաքրքիր ստարտափ էլ կա դիզայնի բնագավառից: Հեղինակները շրջանից են և այնքան հաջողության են հասել իրենց գործում, որ Երևանում խանութ են բացել ու իրենց սեփական բիզնեսն ունեն: Սա «Թուժո»-ի նպատակներից մեկն է՝ բոլորին հասցնել այնպիսի աստիճանի, որ իրենց ապագան կարողանան ստեղծել:

Հատուկ նախագծերի մեկ այլ տարբերակ կա. մասնակիցներին «Թուժո»-ն ուղարկում է միջազգային մրցույթների: Օրինակներ կան ռոբոտաշինության ոլորտում:

Ի հավելումն ասվածի՝ նշենք, որ «Թուժո»-ի շրջանավարտ դառնում են հաճախելուց առնվազն երկու, բայց հիմնականում երեք տարի հետո: Իսկ ովքեր ուզում են երկար վաճել «Թուժո»-ի հաճույքը, կարող են մնալ:

Այստեղից հասկանալի է դառնում, որ համուն գնահատականի սովորելն արտադր է: Ամենից հետաքրքիրը ոչ թե գիտելիքն է, որ ուսանողը ձեռք է բերում, այլ փորձը: Պորտֆոլիոն նրա փորձի պատկերն է, ցույց է տալիս, թե ինչ է արել կյանքում այդքան փոքր տարիքում: Ու դա շատ ավելի ուժեղ փաստ է, երբ ինչ-որ մեկին ուզում է ապացուցել, թե ինչ կարող է անել աշխատանքի կամ համալսարան ընդունվելիս:

Ծնողական շաբաթը եզրափակելուց առաջ



Կորյուն Խաչատրյանը հետևյալն ասաց.

- Մենք՝ հայերս, մեզ ամենագետ ենք կարծում, լավ գիտենք «գիտենք» բառը, բայց ցավալի է, երբ տեսնում ենք, որ իրականությունն այնպիսին չէ, որ մենք ամեն ինչ գիտենք. առաջադեմ երկիր չենք, ցավոք, և լավ է, որ երեխաներն այստեղ փորձ են ձեռք բերում, հասկանում, թե ինչ կարող են և ինչ չեն կարող, որտեղ է իրական դժվարությունը և այլն: Եվ մի բանում վստահեցնում են ձեզ՝ որպես սփյուռքահայ. մեր եկող սերունդը ոչ թե հավասարվում է օտարներին, այլ անցնում է օտարներից: Այն, ինչ իմ ծննդավայրում՝ Ֆրանսիայում, սովորում են սովորական դպրոցում, արտադպրոցական կենտրոններում, մենք այստեղ ոչ թե հավասարվում, այլ անցնում ենք նրանցից: Դուք չեք պատկերացնում, թե այստեղ ինչ հեղափոխություն է կատարվելու: Բայց մի քիչ պետք է սպասենք, որ սերունդը մեծանա:

ՓՆՋԱՅԻՆ

ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՇՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՋՈՒՄ

Ուսման ոլորտում կարևոր են բոլոր առարկաները: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Բայց յուրաքանչյուր առարկա հետապնդում է կրթական որևէ նպատակ: Բոլորից գատ, սակայն, գոյություն ունեն այնպիսիները, որ սովորողների հոգում վառ են պահում ազգային գունդերը, նրանց կապում իրենց արմատներին, կարողանում գնահատել սեփական ազգային արժեքները համաշխարհային համայնապատկերում ու հարազատ մնալ ազգային ավանդույթներին ու սովորույթներին:

Այս անգամ շրջանի փնջային մեթոդավորմանն ընդգրկված ուսուցիչներին (Խնայատ, Նարմուր, Նախիջևանիկ, Ուլտասար) Ասկերանի միջնակարգ դպրոց էր բերել ոչ ավանդական առարկաներից կազմակերպվող ընթացիկ դասարանում մասնակցելու գաղափարը: Դասեր, որ շնչում էին խոր հայրենասիրությամբ, հայրենաճանաչությամբ, ազգային ավանդույթներով ու մարդասիրությամբ և նուրբ քնարականությամբ:

4-րդ դասարանում երաժշտության դաս է: Դասվար Սարիետտա Գարիբյանն ամեն ինչ կազմակերպել էր պատշաճ մակարդակով: Դասի նպատակն էր, որ աշակերտները ճիշտ ճանաչություն և գեղեցիկ կատարել են երգերը՝ հոգևոր թե ժողովրդական, պարեն հայկական պարեր և նվագեն դիտել: Այս ամենով նա զարգացնում էր երաժշտությունը հասկանալու և սիրելու, հայ երգահանների ստեղծագործություններում ժողովրդական երաժշտությունը ճանաչելու և մեկնաբանելու կարողությունը՝ միաժամանակ ծանոթացնելով հայկական ժողովրդական նվագարաններին ու դրանց հնչողությանը:

Ողջ դասի ընթացքում սովորողների համոզեալ ուսուցչուհու ցուցաբերած մեղմ ու փառալույս վերաբերմունքով էին պայմանավորված երեխաների ազատ ու անկաշականդ պատասխանները, երգ, պարը, աշխույժ ու հրճվալից մասնակցությունը մրցույթ-խաղին: Նրանք ճանաչում են հարվածային, ստեղնաշարային նվագարանները, ժողովրդական երգի ժանրերը, «Բարեկենդանի», «Սուրբ Ծննդի», «Ձատկի», «Համբարձման» տոների բովանդակությունը, գիտեն հայտնի երգահաններին՝ հայ և համաշխարհային դեմքերին: Ազգան ֆիզկուլտուրայից նպաստեց սովորողների գիտելիքների հարստացմանը: Ահա շարված են նրանք երեք շարքով. հենում է երաժշտությունը, և երեխաները, ճանաչելով իրենց հանձնարարված տեսակը, շարքով սկսում են քայլել՝ կատարելով երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ: Այնքան ներշնչանակ էին ազգային տարազը, պարը, ընտրված երաժշտությունը, որ թվում էր, թե հայտնվել էինք երաժշտական մի փոքրիկ մոլորակում, ուր իշխում էին երգ, պարը, բարձր տրամադրությունը, գեղեցիկ ընկալման հաճելի բերկրանքը, ծով երջանկությունը: Փոքրիկ դիտելի Սամվելը հնչեցնում է ժողովրդական նվագարանը, շարված են երեխաները և երգում:

Սար, սար, հով սարերի հովիկն եմ... Այնուհետև բեմադրվում է «Արև, արև» երգը: Քաղցր ու հո-

գեպարար մեղեդիով, կախարհիչ խոսքերով երեխաները խաբեցին արևին ու ամպի տակից հանեցին:

Չնչում է «Նագանը», երգում ու պարում են նրանք անմեղ ժպիտն աչքերում:

Ժողովրդական երգ ու երաժշտությանն այսքան ամուր կապված երեխաները ողջ կյանքում կպահպանեն իրենց ազգային ավանդույթները, մշտապես կապված կլինեն դրանց, հավատարիմ կմնան իրենց արմատներին, ուր էլ որ գնան:

Սա է հայեցի դաստիարակության խորքային նշանակությունը:

Ավարտվում են հայրենասիրական պարի ելևէջները, հնչում է «Հայր մեր» հոգևոր երգը: Դիրիժորի պարտականությունը ստանձնած ուսուցչուհուն 45 րո-



պետում հաջողվում է մեզ իր ետևից տանել հազարամյակների խորքերը, վերակենդանացնել դարերով գոյություն ունեցող մեր մշակութային արժեքները, որոնք ներկայացնում են մեր ժողովրդի ավանդական կենցաղը, սովորույթները, հարուստ ժառանգությունը: Դասին ներկա ուսուցիչներին բաժանվում են ճաշակով ձևավորված բացիկներ՝ բարեմաղթանքի խոսքերով:

Երգ սիրեցեք կյանքի բոլոր վայելքներից ավելի,

Երգն է բուժիչ բալասանը անդնդախոր ցավերի,

Երգ հյուսեցեք, անցնեք երգի վիշտն աշխարհը կավերի:

Չնչում է զանգը՝ ավետելով դասի ավարտը, իսկ մենք փորձում էինք ավելի երկար վայելել այդ ջերմ մթնոլորտը՝ համեմատված մանկական անաղարտ սիրով:

Քննարկման ընթացքում գործընկերներն ընդգծեցին մի շարք հանգամանքներ՝ գեղեցիկ ու ճաշակով կախարհով կաթնի տեղը, ուսուցչի խրախուսական խոսքը ամեն քայլափոխի, երեխաների բարձր կատարումները, դասի հաջողվածությունը՝ պայմանավորված ոչ միայն ուսուցչուհու վարպետությամբ ու հմտությամբ, այլև սովորողների անկաշականդ ազատությամբ ու ակտիվությամբ, որի երաժշտական ընթացքը դասավարդ է:

11-րդ դասարանում կազմակերպված ընթացիկ դասը ռուսաց լեզվից էր (ուսուցչուհի՝ Լիանա Սարգսյան)։ Թեման ռուսական ժողովրդական երգերի կյանքն ու գրական գործունեությունը: Ոչ սովորական դաս էր. սովորողներից յուրաքանչյուրն ընտրել էր համացանցում տեղ գտած, իրեն դուր եկած թեման, որ առնչվում էր մեծ պոետի ան-

վանը. «Եսենինի մանկությունը», «Գրական ուղղությունները», «Բազմասեր պոետը», «Եսենինը և Յուրեկովայի հեղափոխությունը», «Եսինինի մահը», առանձին բանաստեղծությունների վերլուծություն ու արտասանություն: Բոլորի հիմքում ընկած էր տաղանդաշատ բանաստեղծի սեր-խոստովանությունը առ հայրենիք. «Իմ պոեզիան շնչում է միայն մեծ սիրով», սեր դեպի հայրենիքը: Չայնեցի գագոդությունը՝ ահա հիմնականը իմ ստեղծագործության մեջ»:

Աշակերտների խոսքն ու երգը շոյում էին մեր լսելիքը, հոգում ծավալում ծով երջանկության անմոռանալի ակնթարթներ: Դասը հաճախ էր ընդմիջվում բանաստեղծի կրակոտ ու զգայացունց, հոգեբանական նուրբ շարիխներով, որ ներկայացվում էին

տեսասահիկներով: Բոլորին չի բախտ վիճակվում ապրել ժողովրդական սիրո վայելքը: Այդ հզոր տաղանդը իր ժողովրդի կուռքն էր և մեծերին հատուկ խառնվածքով գնահատել գիտեր մյուս մեծությունների:

Նոր նյութով «Շահանե, դու իմ Շահանե» բանաստեղծությունը («Պարսկական մոտիվներ» շարքից), շնորհալի ուսուցչուհին ամբողջացնում է մեծ բանաստեղծի կերպարը, որը վերոնշյալ շարքում փորձել է ներկայացնել Յուրեկովայի կնոջից շատ հատկանիշներով տարբերվող Արևելքի կնոջը: Այնքան գունեղ ու ջերմ է Արևելքի այդ շոյալ իրականությունը, որ ընթերցողը կամա-ակամա հայտնվում է այդ միջավայրում:

Իսկ երբ հնչեց ջքնաղ հայուհուն փառաբանող համանուն երգը, բոլորի երևակայության մեջ հառնեց հայոց իշխանուհի Շահանդուխտի հմայիչ կերպարը: Ուսուցչուհու հրաշալի արտասանությունն ու աշակերտուհիներից մեկի հաճելի երգը ներդաշնակվեցին մի պահ, ու մարգարիտներ գլորվեցին հոգիներն ի վար:

Ամենագնահատելի մասն էր, որ դասապրոցեսում աշակերտների և ուսուցչուհու ջանքերով ձևավորվեց մի գրքույկ՝ «Պարսկական մոտիվներ»-ի բանաստեղծությունների ընդգրկմամբ: Դա լավագույն նվեր էր հաջորդ տարվա տասնակերտների համար:

Իրոք, ամեն ուսուցիչ իր դասի ճարտարապետն է, որի աշխատանքի արդյունքում վեր է խոյանում ամրակուռ մի տաճար:

Երրորդ բաց դասը ինֆորմատիկա առարկայից էր (8-րդ դասարան)՝ երիտասարդ ուսուցչուհի Գայանե Սարգսյանի մոտ: Թե-

ման առանձնահատուկ էր Ապահով համացանց: Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան: Ուսուցչուհին, խելացի կազմակերպելով մեծ ինֆորմացիա պարունակող, տեխնիկապես հագեցած դասը, հասավ իր գլխավոր նպատակին՝ մեծերին ու փոքրերին հեռու պահել համացանցում կատարվող վտանգավոր ու տհաճ միջադեպերից: Այս կարծիքին են դասին ներկա մանկավարժները (նրանցից ոմանց համար երազանք է, որ գյուղական դպրոցները ևս ունենային նման հնարավորություններ):

Կրթության բաժնի ավագ մասնագետ Սվետա Ասրյանը, ընդգծելով տեխնիկապես զինված աշխարհի հնարավորությունները, հույս հայտնեց, որ մասնագետներն այն կօգտագործեն ի նպաստ նոր սերնդի: Նա այդ հանդիպումները համարեց լավագույն հնարավորությունը բացահայտելու «Տարվա լավագույն ուսուցիչ», «Լավագույն զինղեկ» և այլ մրցույթների արժանի թեկնածուներին:

Օրվա ծրագրի մշակութային գեղեցիկ վերջաբանը դարձավ ՀՀ և ԱՀ լեզվաբանության Մոնթե Մեյլոնյանի ծննդյան 60-րդ տարելիցին նվիրված բովանդակալից ու բարձրաճաշակ միջոցառումը, որի նախաձեռնողն ու կազմակերպիչը երիտասարդ ուսուցչուհի Գայանե Հայրիյանն էր: Նպատակը՝ Մոնթեի ապրած կյանքի ու սիրագործությունների օրինակով աշակերտների մեջ սերմանել մարդկային բարձր արժեքներ՝ հայրենասիրություն, ազնվություն, արդարամտություն: Նա ավելին էր, քան պատերազմի հերոսը, որին ճանաչում էր, անկախ Արցախյան պատերազմից, միևնույն է, բերելու էին պապերի երկիր:

Հանդիսատեսի առջև հառնեց նվիրվածության մարմնացում, ամենուրեքուրեք փայլուն օրինակ, իսկական հրամանատար, հույսի ու հավատի խորհրդանիշ, հայրենյաց պաշտպան Ավրիլի վերաբեր, որ դարեր շարունակ սերունդներ է կրթելու, օրինակելի զինվորի բացառիկ օրինակ է դառնալու բոլոր ժամանակների համար:

Օրվա խորհուրդը մեկնաբանող ամեն ինչ՝ երգ, ասմունք, բնութագրություն, համացանցի հարուստ նյութեր, ընտրված էր հավերժի ճամփորդ դարձած հերոսի կերպարին համահունչ և ներդաշնակ: Համեստ կենցաղի ու համեստ բնավորության տեր հերոսը միայն կարող էր ասել. «Իմ կենացը մի խմեք, այլ իմ գործը շարունակեք»:

Ամփոփելով օրվա աշխատանքը՝ կրթության բաժնի վարիչի պաշտոնակատար Կ. Մայիլյանն ընդգծեց, որ այսօր մեր մանկավարժների առաջնային խնդիրը մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունն է ու ապագա հայրենասեր զինվոր աճեցնելը: Որ կողմնակցություն համերաշխություն կա ու միաբանություն, այնտեղ էլ՝ գովեստի արժանի աշխատանք:

Թերևս իրավացի էր հրավիրված ուսուցիչներից Կ. Խաչումյանը, երբ, չկարողանալով թաքցնել հիացմունքը, մշեց, որ իմանալով Ասկերան մեկնելու մասին վստահ էր, որ ականատեսն է դառնալու իսկական տոնախմբության: Եվ չէր սխալվել:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ՀԱՅՆ» ԴԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Նոյեմբերի 23-ին Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում տեղի ունեցավ համադպրոցական բաց դաս մայրեցիկ ուսուցչուհի Անետա Տոնյանի մոտ: Թեման «Ես և իմ ընտանիքը» բաժնից էր՝ Հրանտ Մաթևոսյանի «Հացը» պատմվածքը: Դասի նպատակները մի քանիսն էին ակադեմիական («Հացը» պատմվածքի ընկալում և ներկայացում), դաստիարակչական (փոխադարձ հարգանքի, խոստովանության, զղջման դրվատում, սիրո և ազնվության արժևորում, բարեկիրք վերաբերմունքի և խոսքի դաստիարակում), համագործակցային (աշակերտների մտքերի հստակ ձևակերպման օժանդակում, ունկնդրելու, մտքերի փոխանակման, միմյանց աջակցելու կարողության ձևավորում):

Դասասենյակը կահավորված էր Հր. Մաթևոսյանի դիմանկարով, «Հացը» պատմվածքի բնագրով, համակարգչով և պրոյեկտորով: Դասի ընթացքում կիրառվեցին մի շարք մեթոդներ ու հնարներ՝ հարց ու պատասխան, շարադրանք, «T-աձև աղյուսակ», «խորանարդում», քարտային աշխատանք:

Տնային աշխատանքն ստուգելուց հետո (հանձնարարված էր գրել փոքրիկ շարադրություն՝ «Հացը սրբություն է» թեմայով) աշակերտները ներկայացրին 20-րդ դարի խոշոր արձակագիր և կինոսցենարիստ Հրանտ Մաթևոսյանի կենսագրությունն ու գրական հարուստ ժառանգությունը, հնչեցրին հայկական ժողովրդական առած-ասացվածքներ հացի մասին, խոսեցին պատմվածքի ժանրի մասին, վերլուծեցին ստեղծագործության տարբեր մասերը: Դասարանի բոլոր աշակերտները մեծ ոգևորությամբ և ակտիվորեն պատասխանում էին ուսուցչուհու հարցերին, միմյանց շարունակելով՝ վարժ և արտահայտիչ ընթերցում էին բնագիրը, տրամաբանում էին դիպուկ: Ցուցադրվեց տեսասահիկ՝ Հրանտ Մաթևոսյանի «Հացը» խորագրով: Աշակերտները գրատախտակին գրեցին «հաց» բառի հոմանիշները, կազմեցին նախադասություններ այդ սուրբ բառի տարբեր իմաստներով: Միջառարկայական կապեր հաստատվեցին հայոց լեզվի, բնագիտության, մաթեմատիկայի և երաժշտության հետ: Աշակերտները լրացուցիչ տեղեկություններ հաղորդեցին հայ երգահան, երգիչ, երաժշտագետ, վարդապետ և ուսուցիչ Կոմիտասի մասին: Նրանք դիպուկ, սպառիչ և տրամաբանական պատասխաններ էին տալիս բոլոր հարցերին (Ինչո՞ւ է հեղինակը «Հացը» վերնագիրն ընտրել: Պատկերացրու, որ տղան խոստովանել է, որ չի փնտրել խոզերը, քո կարծիքով ի՞նչ կանեին մեծերը: Եթե դու լինեիր տղայի փոխարեն, ի՞նչ կանեիր: Կկարողանա՞լի՞ր քո սխալի համար անկեղծորեն պատմել: Ե՞րբ զղջաց տղան: Արդարացնո՞ւմ եք պատմվածքի հերոսին): Ձուգահեռներ անցկացվեցին Հրանտ Մաթևոսյանի «Հացը» և Ու. Լիվինգսթոնի «Հոր զղջումը» ստեղծագործությունների միջև: «Հացը» պատմվածքում որդին է զղջում, երկրորդ գործում՝ հայրը: Աշակերտներն ընդհանրացրին. Եսասիրության և ծուլության պատճառով տղան չի կատարում հոր հանձնարարությունը, և որ միայն պայծառ գերագանցներ ստանալով՝ տղան լավ մարդ չի կարող կոչվել:

Ուսուցչուհին հանդես եկավ ամփոփիչ խոսքով: Նա ընդգծեց այն միտքը, որ հրաշալի է, երբ մարդն անկեղծորեն ափսոսում է և ընդունում իր սխալը: Գնահատվեց աշակերտների մեծ մասը: Տնային աշխատանք հանձնարարվեց՝ «Ի՞նչ տվեց մեզ «Հացը» պատմվածքը» վերնագրով:

Դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող, գեղեցիկ, հաջողված, հետաքրքիր, ուսանելի և հագեցած դաս էր: Ուսուցչուհու գեղեցիկ խոսքը, անմիջականությունն ու պատրաստվածությունը մեծապես նպաստեցին որակյալ և անկաշականդ դասի կայացմանը:

**Նանար ՍԻՄՈՆՅԱՆ**  
Սրբեկ. հ. 6 հիմն.  
դպրոցի ՍՀՂԱԿ

ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՊԱՏԱԿԱԶԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկզբը՝ նախորդ համարում

**IX եղանակ:** (1) հավասարումը կարելի է ներկայացնել նաև

$$\sqrt{1 - \sin^2 x} - 1 - \sin x$$

տեսքով և կատարելով նախորդ եղանակում կատարված ձևափոխությունները, կունենանք

$$\begin{cases} \sin x = 0 \\ \sin x = 1 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = \frac{\pi}{2} + 2\pi k \\ x = \frac{\pi}{2} + 2\pi k \end{cases}$$

Վերցնում ենք միայն  $x = 2\pi k$ ,  $x = \frac{\pi}{2} + 2\pi k$  արժեքները:

**X եղանակ:** (1) հավասարման երկու կողմը բազմապատկենք  $\sin x \neq 0$  -ով: Ձևափոխությունների արդյունքում կստանանք

$$\sin^2 x + \sin x \cos x - \sin x \Leftrightarrow 1 - \cos^2 x - \sin x(1 - \cos x) - 0 \Leftrightarrow$$

$$\Leftrightarrow (1 - \cos x)(1 + \cos x - \sin x) = 0 \Leftrightarrow$$

$$\begin{cases} 1 - \cos x = 0 \\ 1 + \cos x - \sin x = 0 \end{cases}$$

Լուծելով համախմբի առաջին հավասարումը, կստանանք

$$\cos x = 1, x = 2\pi k$$

Օգտվելով համախմբի երկրորդ և երկրորդին հավասարումներից՝ կունենանք

$$\begin{cases} \cos x - \sin x = -1 \\ \cos x + \sin x = 1 \end{cases}$$

Բազմապատկելով համակարգի հավասարումների աջ և ձախ մասերը, կստանանք

$$\cos 2x = -1, x = \frac{\pi}{2} + \pi n$$

Վերցնում ենք միայն  $x = \frac{\pi}{2} + 2\pi k$  արժեքները:

**XI եղանակ:** (1) հավասարման երկու կողմը բազմապատկենք  $\cos x \neq 0$  -ով: Ձևափոխությունների արդյունքում կստանանք

$$\cos^2 x + \sin x \cos x = \cos x \Leftrightarrow 1 - \sin^2 x - \cos x(1 - \sin x) = 0 \Leftrightarrow$$

$$\Leftrightarrow (1 - \sin x)(1 + \sin x - \cos x) = 0 \Leftrightarrow$$

$$\begin{cases} \sin x - 1 \\ 1 + \sin x - \cos x = 0 \end{cases}$$

Լուծելով համախմբի առաջին հավասարումը, կստանանք

$$\sin x = 1, x = \frac{\pi}{2} + 2\pi k$$

Օգտվելով համախմբի երկրորդ և երկրորդին հավասարումներից՝ կունենանք

$$\begin{cases} \cos x - \sin x = 1 \\ \cos x + \sin x = 1 \end{cases}$$

Գումարելով համակարգի հավասարումների աջ և ձախ մասերը՝ կստանանք

$$\cos x = 1, x = 2\pi k$$

**XII եղանակ:** (1) հավասարման երկու կողմը բաժանենք  $\sin x \neq 0$  -ի վրա կունենանք

$$1 + \operatorname{ctg} x = \frac{1}{\sin x} \Leftrightarrow (1 + \operatorname{ctg} x)^2 = \frac{1}{\sin^2 x}$$

Օգտվելով

$$\frac{1}{\sin^2 x} = 1 + \operatorname{ctg}^2 x$$

նույնությունից՝ կստանանք

$$1 + 2\operatorname{ctg} x + \operatorname{ctg}^2 x - 1 + \operatorname{ctg}^2 x \Leftrightarrow \operatorname{ctg} x = 0 \Leftrightarrow x = \frac{\pi}{2} + \pi n$$

Վերցնում ենք միայն  $x = \frac{\pi}{2} + 2\pi k$  արժեքները:

Եթե  $\sin x = 0$ , ապա  $x = \pi n$ : Վերցնում ենք միայն  $x = 2\pi k$  արժեքները:

**XIII եղանակ:** (1) հավասարման երկու կողմը բաժանենք  $\cos x \neq 0$  -ի վրա կունենանք

$$1 + \operatorname{tg} x = \frac{1}{\cos x} \Leftrightarrow (1 + \operatorname{tg} x)^2 = \frac{1}{\cos^2 x}$$

Օգտվելով

$$\frac{1}{\cos^2 x} = 1 + \operatorname{tg}^2 x$$

նույնությունից՝ կստանանք

$$1 + 2\operatorname{tg} x + \operatorname{tg}^2 x - 1 + \operatorname{tg}^2 x \Leftrightarrow \operatorname{tg} x = 0 \Leftrightarrow x = \pi n$$

Վերցնում ենք միայն  $x = 2\pi k$  արժեքները:

Եթե  $\cos x = 0$ , ապա  $x = \frac{\pi}{2} + \pi n$ : Վերցնում ենք միայն  $x = \frac{\pi}{2} + 2\pi k$

արժեքները:

**XIV եղանակ:** (1) հավասարումը ներկայացնենք

$$\sqrt{\frac{1 - \cos 2x}{2}} + \sqrt{\frac{1 + \cos 2x}{2}} = 1$$

տեսքով և հավասարման երկու կողմը բարձրացնենք քառակուսի: Կստանանք

$$\frac{1 - \cos 2x}{2} + \frac{1 + \cos 2x}{2} + 2\sqrt{\frac{1 - \cos^2 2x}{4}} = 1$$


որը բերվում է  $\sin 2x = 0$  հավասարման, որի ընդհանուր լուծումն է

$$2x = \pi n \Leftrightarrow x = \frac{\pi n}{2}$$

Դեն նետելով քառակուսի բարձրացման արդյունքում առաջացած ավելորդ լուծումները, կստանանք  $x = 2\pi k$  և  $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ :


**XV եղանակ:** (1) հավասարումը կարելի լուծել նաև գրաֆիկական եղանակով:

ա) Նախ այն ներկայացնենք  $\sin x = 1 - \cos x$  տեսքով, այնուհետև կառուցենք  $y = \sin x$  և  $y = 1 - \cos x$  ֆունկցիաների գրաֆիկները: Այստեղ, իհարկե, հարմար է դիմել համակարգի օգնությանը: Գրաֆիկների հատման կետերի արգիսները կլինեն (1) հավասարման լուծումները (նկ.1):




Նկ.1

բ) (1) հավասարումը կարելի ներկայացնել նաև  $\cos x = 1 - \sin x$  տեսքով: Այս դեպքում պետք է կառուցել  $y = \cos x$  և  $y = 1 - \sin x$  ֆունկցիաների գրաֆիկները: Նորից գրաֆիկների հատման կետերի արգիսները կլինեն (1) հավասարման լուծումները (նկ.2):



Նկ. 2

գ) Հավասարումը գրաֆիկական եղանակով կարելի լուծել՝ կառուցելով  $y = \sin x + \cos x$  և  $y = 1$  ֆունկցիաների գրաֆիկները: Գրաֆիկների հատման կետերի արգիսները կլինեն (1) հավասարման լուծումները (նկ.3):



Նկ. 3

Նկ.1-3 -ում պատկերված են առաջին վեց արմատների արժեքները:



ՆԱԽԱԿԹԱՐԱՆ

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԻԹ

Ստեփանակերտի հ. 4 մանկապարտեզն երրորդ տարին է, ինչ գործում է. սկզբում երկու, իսկ մասնաշենք ունենալուց հետո երեք խմբով՝ շուրջ 150 երեխայի ընդգրկմամբ: Առաջին անգամ այստեղ անցկացվեց բաց պարապմունք, որին ներկա էին ԱՅ ԿԳՍՆ, քաղաքապետարանի ԿՍ բաժնի մասնագետները, ներկայացուցիչներ մայրաքաղաքում գործող բոլոր մանկապարտեզներից: Մինչև պարապմունքն սկսվելը հյուրերը շրջեցին մանկապարտեզի շենքերով: Աշխարհային ջերմ արևից առավել ջերմացնող էին մանկապարտեզի հաճելի տեսքն ու ձևավորումը: Մանկապարտեզն ունի տիպային բակ՝ անհրաժեշտ անկյուններով՝ խաղահրապարակ, տաղավարներ: Դրանք ձևավորված են ձեռքի գեղեցիկ աշխատանքներով: Տեղեկացանք, որ այդ բոլորը մանկական այս հիմնարկի աշխատողների մտքի և ձեռքի արգասիքն են: Այստեղ ամիջապես աչքի է զարնում ազգային կոլորիտը: Բակի յուրաքանչյուր քիչ իմաստավորված է հետաքրքիր դիզայնով և հուշում է, թե ինչ գեղեցիկ իրեր կարելի է պատրաստել առաջին հայացքից ոչ պիտանի իրերից: Նույնպես և ճաշակով, գեղարվեստորեն ձևավորված են խմբասենյակները: Ամեն ինչ աչք շոյող է՝ գույների հետաքրքիր համադրությամբ: Դրանց համահունչ է աշխատողների կրած համազգեստը:

սուղ պայմաններին և նորաստեղծ լինելուն, մանկապարտեզն ակտիվորեն մասնակցում է քաղաքային միջոցառումներին՝ մրցույթներին ու համերգներին: Ուսուցչի օրվան նվիրված տոնական միջոցառմանը մանկապարտեզը հանդես էր եկել հատուկ ծրագրով: Բաց պարապմունքը «Աստղիկ» խմբի դաստիարակչուհի Արմինե Խաչատրյանի մոտ էր,



խոսքի զարգացման բարոյական դաստիարակություն բաժնից՝ «Վարվեցողության կանոնները» թեմայով: Նպատակն էր երեխաների մեջ ձևավորել անձնական վերաբերմունք բարոյական նորմերի պահպանման կամ խախտման նկատմամբ:

Երեխաների մուտքը «Բարև» երգի երաժշտության ներքո, որի ընթացքում ողջույն-ի տարբեր հոմանիշներով դիմեցին հյուրերին, ուրախ տրամադրություն ստեղծեց:

Դաստիարակի հարցմանը՝ ինչ են ուզում դառնալ, նրանցից շատերը պատասխանեցին՝ հայրենիքի պաշտպան, բժիշկ, ոստիկան: Ամենակարևորը լավ մարդ դառնալն է՝ հավելեց դաստիարակը: Իսկ լավ մարդ լինելու համար նախ և առաջ պետք է լինել բարեկիրթ, քաղաքավարի, մարդասեր, մեծահոգի, ընկերասեր, սիրալիր, խելացի: Նման մարդիկ սովորաբար օգտագործում են կախարհական բաներ՝ «Ներողություն», «Հնորհակալություն» և այլն, սովորեցնում էր դաստիարակչուհին:

Իսկ քանի որ բարի խոսքը մարդկանց դարձնում է բարի, չարը՝ վիրավորում, երեխաներն ասացին ասացվածքներ բարի և չար արտահայտությունների մասին:

Իսկ բարիքի արգասիքն է հարգաբերություններ ցուցադրելու նպատակով սիրված ստեղծագործությունների թեմաներով փոքրիկ բեմականացումներ ցուցադրեցին: «Շունն ու կատուն» և «Արագիլն ու աղվեսը» նրանց ներկայացման մեջ վերջում հերոսներն իրարից ներողություն են խնդրում և հաշտվում, քանի որ հասկացել են, որ եթե մեկից մի բան են վերցնում, պետք է վերադարձնել, իսկ եթե մեկին հյուր են կանչում, պետք է նրա հետ լինել սիրալիր, արտանց հյուրասիրել:

Եվ քանի որ այդ օրը նաև իրենց ընկերոջ՝ Արենի ծննդյան օրն էր, որպես անփոփոխ՝

երեխաները բազմաթիվ բարեմաղթանքներ հղեցին նրան՝ բարեկիրթ մթնոլորտում տոնելով նրա տարեդարձը:

Երեխաների հեռացան՝ ծննդյան տոբը ճաշակելու, իսկ բաց պարապմունքի մասնակցները սկսեցին քննարկել տեսածը: Մանկապարտեզների ներկայացուցիչները պարապմունքը համարեցին ուսանելի: Նշենք, որ շատերը սկսնակ են: Նրանք ընդգծեցին երեխաների կազմակերպվածությունը, անկաշկանդ լինելը, միջառարկայական կապը, պարապմունքի հագեցած լինելը: Փորձառու մասնագետների ուշադրության կենտրոնում գրական հայերենով մաքուր արտահայտվելու, ճիշտ շեշտադրելու պահանջն էր: Դրվատվեց ոչ միայն դաստիարակ Արմինե Խաչատրյանի, այլև երաժշտական ղեկավար Էլինա Ալուխանյանի, պարուսույց Դիանա Համբարձումյանի և առհասարակ ողջ կոլեկտիվի միաձույլ ու համերաշխ աշխատանքը:

ԿԳՍՆ նախադպրոցական և արտադպրոցական բաժնի վարիչ Աննա Այվազյանը ընդհանուր առմամբ գոհ էր պարապմունքից: Առիթն օգտագործելով, որ այստեղ կան բոլոր մանկապարտեզներից դաստիարակներ, նա անցկացրեց փոքրիկ սեմինար-գրույց:

Բաց պարապմունքները հենց այնպես դիտելու համար չեն, այլ փորձի փոխանակման, նշեց նա՝ ավելացնելով, որ դրանք պետք է դառնան պարբերական ու զարգացնող: Նա հրահանգեց բոլոր մանկապարտեզների խմբասենյակներում փակցնել վարվեցողության կանոնները. դրանք նշված են ձեռնարկներում, որոնցով ապահովված են նախադպրոցական հաստատությունները: Եվ այդ կանոնների յուրաքանչյուր կետի վրա աշխատել առանձին: Իսկ այս պարապմունքում գործածված «բարև», «ներողություն», «Հնորհակալություն» արտահայտությունները երեխան պետք է օգտագործի ոչ միայն մանկապարտեզում, այլև առօրյա կյանքում: Դաստիարակը պետք է աշխատի հեքիաթից գալ ղեպի իրականություն: Երեխան իրական կյանքում պետք է կարողանա զննահատել իր շրջապատում կատարվածը՝ դրական թե բացասական: Նաև կարողանա «բարև» բառն իր տարիքին համապատասխան ստուգաբանել, իմանա, որ «բարև»՝ նշանակում է բարի արարիչ: Մանկապարտեզում պետք է տարվի նաև հոգևոր դաստիարակություն:

Նա խորհուրդ տվեց դաստիարակներին երեխային կրկնել տալ մյուսի ճիշտ պատասխանը և անպայման լրացնել թերի պատասխանը, իսկ վերջում միասին գալ եզրահանգման: Պարապմունքներում մեծ տեղ տալ տեսողական մասին, ինչպես այս դեպքում էր: Այս տարիքի երեխաների մոտ տեսողականն է հիշվում, մնում ու ամրապնդվում: Բոլոր դաստիարակներն ունենան դիդակտիկ շատ պարագաներ, ձեռքի աշխատանքներ, ընդ որում՝ դրանք պատրաստեն երեխաների հետ միասին:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Շնորհավորանք

ՄԻՇՏ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԳՈՐԾԻՆ



Կարողանալ սիրել և լինել սիրված աշխատանքում, աշակերտներին, ծնողներին, կոլեկտիվի կողմից՝ ոչ բոլորին է հաջողվում: Լրացավ Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի դասվար Սուսաննա Սարգսյանի ծննդյան 55 տարին: Մարդ, որ աչքի է ընկել որպես հմուտ մանկավարժ, խելացի կին, բարի մայր, սիրելի տատիկ, նվիրված անձնավորություն:

Ծնվել է 1962թ. նոյեմբերի 30-ին Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Գիշու միջնակարգ դպրոցում: Սիրով ու քնքանքով է հիշում իր դասավանդած բոլոր ուսուցիչներին: Գիշու միջնակարգ դպրոցում դասավանդում էին լավագույն մասնագետներ, որոնց մասին խորին հարգանքով ու երախտագիտության զգացումով է հիշում: Նրանցից ընդօրինակել է լավագույն հատկանիշներ, ստացել այնպիսի գիտելիքներ, որ ծառայում են իրեն առայսօր:

Ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «ԸՏԱ-ֆիզիկա» բաժինը՝ գործուղվել է Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոց, որտեղ աշխատում է առայսօր: Սուսաննա Սարգսյանը իրեն դրսևորում է որպես խելացի մանկավարժ, քանի որ դպրոցական տարիներին նույնպես եղել է առաջավոր աշակերտների շարքերում, սովորել է գերազանց գնահատականներով: Բանիմաց ուսուցիչ լինելուց բացի նվիրված զարկ էր տալ: Նույն ոգով էլ դաստիարակել է իր երեխաներին:

Իր 55 տարիներից 32-ը նա անց է կացրել դպրոցում՝ սեր ու ջերմություն, գիտելիք ու հմտություն փոխանցելով սաներին: Նա միշտ էլ հավատարիմ է եղել իր առաքելությանը՝ ուսուցիչ աշխատանքին:

Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի ուսուցչական կոլեկտիվը՝ տնօրեն Կարինե Պողոսյանի գլխավորությամբ, շնորհավորում է Սուսաննա Սարգսյանի ծննդյան 55-ամյակը, մաղթում տոկունություն, առողջություն, երկար տարիների կյանք:

Երկի միայն ուսուցիչն է, որ ապրում ու արարում է առանց հատուկ գնահատանք ակնկալելու: Փորձառու ուսուցչուհուն միշտ էլ հաջողվել է գտնել մատաղ հոգիների բանալին: Նրա կողմից յուրաքանչյուր դասի նպատակալաց ու հմուտ կազմակերպումը կարևորվում է նրանով, որ բոլոր դասերն անցնում են աշակերտների ակտիվության, կարողությունների ու հմտությունների զարգացման պայմաններում: Տիկին Սարգսյանի կազմակերպած բոլոր բաց դասերը, միջոցառումներն անցել են բարձր մակարդակով և արժանացել գովասանքի:

Թող անխափան լինի նման ուսուցիչների երթը մեր պատմության քառուղիներում, և թող նրանք միշտ վառ պահեն գիտության լուսավոր կանթերը:

Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 մ/հ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ



խմբասենյակներում առկա են գեղեցիկ ձևավորված մեթոդական անկյուններ, իսկ բաց պարապմունքն անցկացված սենյակի ուսումնական պատին արտացոլված է մանկապարտեզի առօրյան. մի պատից կարելի է պատկերացում կազմել մայրենի թեմաների, մյուսից՝ մաթեմատիկայի, երաժշտության, կերպարվեստի, ֆիզկուլտուրայի և այլնի մասին:

Տնօրեն Նուրնե Միքայելյանից իմացանք, որ պակաս բաներ շատ ունեն: Ամենակարևորը՝ չունեն երաժշտության, ֆիզկուլտուրայի դահլիճներ: Երեխաների քանակը շատ է, թաղամասի բնակչության պահանջը՝ մեծ, հերթագրվածներ շատ կան, իսկ մանկապարտեզը փոքր է:

Նախարարության նախադպրոցական և արտադպրոցական կրթության բաժնի վարիչ Աննա Այվազյանից տեղեկացանք, որ չնայած

Առաջարկ

Համաձայն ԿԳՍ նախարարության և Արցախի հոգևոր թեմին կից Եկեղեցափրաց եղբայրակցության կազմած համատեղ աշխատանքային պլանի՝ Ստեփանակերտի ուսումնական հաստատություններում անցկացնում ենք հանդիպումներ, որոնց նպատակն է երեխաների և երկրի հոգևոր անվտանգությունը: Այս փոքր քաղաքում վիստում են տարբեր աղանդավորներ, որոնք իրենց ցանցն են գցում վշտի միֆթարություն փնտրող, իրենց կորցրած, կրոնից անտեղյակ կամ շահին շահագրգիռ մարդկանց: Սրանք էլ իրենց զավակներին են փորձում տանել այդ ճանապարհով: Ինչ էլ այս ամենը իր հետ բերում՝ բոլորս ենք հասկանում: Մենք պատերազմող երկիր ենք: Հնարավոր է, նույնիսկ կարող ենք մտնել հավերժ պայքարող երկրների ցուցակի մեջ, հետևաբար, մեր ծնվող և աճող սերունդը պետք է դառնա իր հայրենիքի վաղվա պաշտպանը, որին դեմ են աղանդները: Օրինակ՝ «Եհովայի վկաները» չեն ընդունում բանակ, զինվոր, զենք, պաշտպանություն հասկացու-

ԼՍԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ

թյունները, նույնը և՛ մնացածները: Այսինքն՝ նրանց բազմացումն Արցախում վտանգավոր է. խարխուլում է մեր հայրենիքի անվտանգության հիմքերը:

Հանդիպումներն անցնում են ակտիվ մթնոլորտում՝ հարց ու պատասխանի տեսքով: Ամեն հանդիպումից հետո մենք՝ Մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության ազգային փոքրամասնության, կրոնի բաժնի վարիչ Աշոտ Սարգսյանը, Հայ Առաքելական եկեղեցու Եկեղեցափրաց եղբայրակցության ավագ Արմեն Մաղաքեյանը և ես զգում ենք կրոնի քարոզչության պակասը դպրոցներում: Որոշ դպրոցներից «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչները բողոքում են կրոնի դասագիրքը այդ առարկայով փոխարինելու փաստից: Նրանց կարծիքով՝ այդ առարկան կարելի է մտցնել պատմության դասագրքերը և փոխարենը դասավանդել «Կրոն», որ տարիներ առաջ կատարվում էր ու շատ լավ արդյունք էր տալիս:

Ցանկալի է «Լուսարար» թերթում առանձնացնել «Բաց ամբիոն» էջ և քննարկում ծավալել հանրակրթական դպրոցներում «Կրոն» առարկայի դասավանդման և աշակերտների հոգևոր անվտանգության հարցերի շուրջ:

Խնդիրը համընդհանուր է, լուծումը՝ անհրաժեշտ: Եվրոպական շատ երկրներում մանկապարտեզից սկսած մինչև դպրոցն ավարտելը ուսուցանվում է «Կրոն» առարկան: Հայաստանի կրթական համակարգը դեմքը թեթել է դեպի Եվրոպա՝ շատ հարցերում ընդօրինակելով և ներդնելով նրանց փորձը: Ուրեմն՝ ինչո՞ւ այս հարցում էլ չհետևենք նրանց: Չէ՞ որ քաղաքացու հոգևոր անվտանգությունը երկրի ռազմական անվտանգության երաշխավորն է:

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ  
ԱՅ ԿԳՍՆ արտադպրոցական և նախադպրոցական բաժնի վարիչ



ԳԻՏԱՍԱՐ

ԱՐՅԱՆՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԱԶԵՆԷ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկությունը մտել է գիտելիքների դարաշրջան: Տարբեր հրապարակումներում տարբեր ձևերով է այն հնչում՝ «Տեղեկատվության դարաշրջան», «Թվային դարաշրջան», «Ոսկե դարաշրջան», «Գիտելիքի դարաշրջան» և այլն: Գիտական գրականության մեջ զարգացման նոր ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական արդյունքների ստեղծման և ուսումնասիրման համար օգտագործվում են այսպիսի տերմիններ: «Գիտելիքների հասարակություն», «Գիտական հասարակություն», «Գիտելիքի վրա հիմնված տնտեսություն», «Գիտելիքի տնտեսություն» կամ «Գիտելիքահենք տնտեսություն»:

Չարգացման ներկա ժամանակաշրջանի անունն այնքան էլ էական չէ: Կարևորն այն է, որ ժամանակակից աշխարհում գործում են նոր միտումներ, որոնցից մեկը մրցակցության համակենտրոնացման գիտելիքի վերափոխումն է առանցքային ռեսուրսի՝ ուղղված բարձր տեխնոլոգիաների և գիտելիքների հիման վրա ապրանքների և ծառայությունների ստեղծմանը:

Ներկայումս շատ պետություններ բուռն կերպով զարգացնում են գիտությունն ու կրթությունը, քանի որ տնտեսության հիմնական շարժիչ ուժ են գիտությունը, նորագույն տեխնոլոգիաներն ու մարդկային ներուժը:

Յակարկել է, որ գիտելիքահենք տնտեսությունն ստեղծելու նպատակով չպետք է սահմանափակվել տեղեկատվության լոկալ ազատ փոխանցմամբ: անհրաժեշտ է տեղեկատվությունը փոխանակել, համեմատել, քննարկել, գնահատել ու մեկնաբանել, որպեսզի յուրաքանչյուրն ի վիճակի լինի տեղեկատվական հոսքերի հիման վրա արտադրել (ստեղծել) նոր գիտելիքներ:

Գիտելիքահենք տնտեսության հայեցակարգը բավականին լայն շրջանակներ ունի: Մինչև որ մարդկությունը իմաստալից չզննահատի տեղեկատվությունը, չվերլուծի, չտարբերակի տեղեկատվությունը և չներառի իրեն հետաքրքրող տարրերը սեփական գիտելիքների բազայի մեջ, այն հանդես կգա անորոշ տվյալների զանգվածի տեսքով: Մարդիկ պետք է սովորեն տիրապետել տեղեկատվությանը, որպեսզի հակառակը տեղի չունենա:

Դա տնտեսություն է, որն օգտագործում է գիտելիքները տարբերակված ձևերով: Այդ տնտեսության շրջանակներում գիտելիքները ստեղծվում են գիտական և բարձր տեխնոլոգիական արտադրանքի, բարձրորակ կրթության ու ծառայությունների տեսքով:

Սկսած հին դարերից՝ ցանկացած հասարակություն հիմնվել է գիտելիքների վրա: Իսկ այսօր մենք խոսում ենք գիտելիքների վրա հիմնված տնտեսության մասին՝ գիտելիքների և տեղեկատվության արագ փոխանակման հեղափոխական գործընթացներն ի գիտությունը ընդունելով: Այդ փոխանակումը ներգրավում է ավելի ու ավելի շատ մարդկանց, և շուտով գործնականում յուրաքանչյուր մարդ կարող է մասնակցել գիտելիքների մշակման ու կիրառման և նոր գիտելիքների ստեղծման տեղեկատվական գործընթացներին: Գիտելիքը դիտարկելով որպես տնտեսական ապրանք և կախված դրա որակից, քանակից ու ճիշտ օգտագործումից՝ կարելի է ապահովել տնտեսության հետագա զարգացում, այսինքն՝ գիտելիքահենք տնտեսությունն ունենալու դեպքում ցանկացած ոլորտում հնարավոր է գիտելիքը եկամտի վերածել:

Գիտելիքահենք տնտեսությունը բնութագրվում է ռիսկերի ավելի բարձր մակարդակով, որոնց հետ առնչվում են այդ տնտեսության սուբյեկտները: Ժամանակակից տնտեսության արագորեն աճող փոփոխությունների ռիսկը հանգեցնում է նրան, որ նոր գիտելիքների առաջացումն ավելի արագ է արժեզրկում ոչ միայն արտադրության նյութական տարրերն ու ակտիվները, այլ նաև անհմաստ է դարձնում արտադրության շատ ոչ նյութական ակտիվները, այդ թվում՝ արտոնագրերը, նոու-հաուն և այլն: Այդ պատճառով էլ արտադրության այդ բաղադրիչներում կատարված ներդրումները չեն կարող լիովին մարվել (հատուցվել), որն էլ կարող է հանգեցնել կորուստների:

Տեղեկատվական բաղադրիչը սկսում է գերիշխել ցանկացած արտադրության և քիզմեսի (գործարարության) մեջ: Տեղեկատվական բաղադրիչի զարգացումը միաժամանակ դառնում է երկրի կամ տարածաշրջանի զարգացման գործոնը, ցուցանիշն ու արդյունքը: Տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացումը, որը հանդիսանում է նաև գործարարության ենթակառուցվածք,

դառնում է զրավչության և գործարար ակտիվության զարգացման գործոն: Համակարգչային տեխնիկան, ցանցերը, տեխնոլոգիաները, համակարգչային դիզայնն ու կապի միջոցներն այսօր հանդես են գալիս որպես ամբողջ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման խթան և գործոն: Տեղեկատվությունն այսօր դառնում է զարգացման ռեսուրս, իսկ ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների զարգացման մակարդակը որոշում է այդ առաջընթացի տեմպը:

Իմաստ չունի գիտական ոլորտի ֆինանսավորման առնչվող թվային տվյալներ ներկայացնել և համեմատվել այլ երկրների(գիտությանը առաջընդհանրող) հետ, քանի որ տարբերությունը շատ մեծ է ֆինանսների սղության պատճառով: Իրավիճակը շտկելու համար կարևոր է նաև մասնավոր հատվածի ներգրավումը: Բայց այստեղ միայն ֆինանսների պակասը չէ, այլ պահանջների ընդհանրացված լինելը: այսինքն՝ արդյունք ստանալու համար անհրաժեշտ են բավարար պայմաններ և հստակ, կետավորված ու մատնանշված պահանջներ, որպեսզի ներդրված յուրաքանչյուր լումայի համար պատասխանատվություն կրեն թե՛ պայմաններ ապահովողները, թե՛ պահանջներ կատարողները:

Ներկայիս պայմաններում անվիճելի է, որ հայկական պետության տնտեսության զարգացման հիմքը գիտելիքն ու ստեղծագործական ներուժն են: Պետք է առաջնորդվել տնտեսության մրցունակության բարձրացման, տնտեսական շարունակական աճի ապահովման մեխանիզմներով և գիտելիքահենք տնտեսություն կառուցելու անհրաժեշտությամբ: Այդ ուղղությամբ կատարվում են ծավալուն աշխատանքներ, կլինեն զգալի արդյունքներ, իսկ առավելագույնին հասնելու համար պետք է արդյունավետ օգտագործվի մեր գիտական բավականաչափ ներուժը:

Աշխարհաքաղաքական բարդ խնդիրներ ունեցող պետության համար գիտության զարգացումը կենսական նշանակություն ունի: Ցանկացած երկրում ամենակարևորն ու արժեքավորը մարդկային ռեսուրսն է, առավել ևս՝ մեզ համար: Մարդկային կապիտալի զարգացումը վճռորոշ դեր կարող է խաղալ հանրապետության տնտեսության կայուն զարգացման համար: Դրան ոչ ճիշտ մոտեցումը

կարող է հանգեցնել պրոֆեսիոնալ կադրերի արտագաղթին, որոնք կարող էին երկրի համար նյութական բարիքներ ստեղծել, բայց ընդունակությունների կիրառման հնարավորություն չգտնելով՝ հեռանում են արտերկիր:

Ունենալով մեծ ազդեցություն և հանդիսանալով տնտեսության շարժիչ ուժ, հանդես գալով որպես յուրօրինակ ուժ հասարակության զարգացման և կայունացման գործում՝ գիտությունը կարող է զգալիորեն մեծացնել տնտեսության զարգացման ներուժն ու ապահովել տնտեսական աճ: Հետզհետե հասարակությունը պետք է վերափոխվի գիտելիքի հասարակության, որտեղ գիտելիքը կլինի հիմնական շարժիչ ուժը, իսկ գիտելիքային աշխատողները կլինեն աշխատուժի գերակշռող մասը: Ըստ Ա. Մարշալի բնութագրման՝ կապիտալի հիմքը գիտելիքն է:

Գիտելիքահենք տնտեսությունը ենթադրում է գիտելիքի վրա հիմնված տնտեսության կազմակերպում և ընդունվում որպես երկարաժամկետ կայուն զարգացման ուղղորդիչ վեկտոր, որի առանցքային գործոնները գաղափարներն են ու դրանց կյանքի կոչելը: Դրան հասնելու նպատակով անհրաժեշտ են համապատասխան քայլեր:

Մարդկային կապիտալի զարգացման ու գիտության ներուժի, նոր մտածելակերպի, զարգացած կրթության և գիտության շնորհիվ հնարավոր է ունենալ մրցունակ ու զարգացող տնտեսություն և շարժվել շուկայի ժամանակակից պայմաններին ու թելադրանքին համահունչ՝ հանրապետության բնակչության համար բարձր կենսամակարդակ ապահովելով:

Գիտելիքահենք տնտեսության ստեղծումն արդիական է ու հրատապ, չնայած գործընթացը ֆինանսատար է և աշխատատար: Անհրաժեշտ է համատեղ ուժերով լուծել երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն ու նախանշել զարգացման հեռանկարները: Հիշարժան են անգլիացի փիլիսոփա, պատմաբան, քաղաքական գործիչ Ֆրենսիս Բեկոնի թևավոր խոսքերը. «Ապագան պատկանում է նրանց, ովքեր աշխատում են ոչ թե ձեռքերով, այլ գլխով (ուղեղով)»:


**Տիգրան ՀԱԿՈՔՅԱՆ**  
**ԱրՊՀ, տնտեսագիտության թեկնածու, իրավաբան**

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԳՐԱՏԱԽՏԱԿԸ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՅ

Յուրաքանչյուր աշխատանք, որ կատարվում է սիրով և մասնագիտորեն ճիշտ մոտեցումով, միշտ էլ հիանալի տպավորություն է թողնում:

Նոյեմբերի 24-ին Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցում անց է կացվել բաց դաս երկրաչափությունից: Ուսուցչուհի Սոնյա Պողոսյանը մեծ ջանք էր թափել՝ դասը լիարժեք և հմուտ վարելու համար: Ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար Մ. Համբարձումյանը, ինֆորմատիկայի տեսուչ Զ. Իսրայելյանը, Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Զ. Դուլյանը, շրջանի դպրոցների մաթեմատիկայի ուսուցիչներ:

Բաց դասի նպատակն էր նյութը աշակերտներին մատուցել նոր մեթոդներով՝ ինտերակտիվ գրատախտակի միջոցով: Վերջինիս օգտագործումը նպաստեց իրագործելու մի շարք արդյունավետ աշխատանքներ: Այն պարունակում է բազմաթիվ ֆունկցիաներ: Կարողանալ օճ-



լայն լուծել երկրաչափական խնդիրներ՝ մեծ ձեռքբերում է աշակերտների համար: Նման պարապմունքները սովորողների համար կրթությունը դարձնում են ավելի հետաքրքիր: Ուսուցչուհու պարզաբանումները և վերաբերմունքը նույնպես դրական ազդեցություն ունեցան, քանի որ աշակերտների կողմից լարվածություն, կաշկանդվածություն չէին զգացվում: Ինտերակտիվ գրատախտակից կարողացան օգտվել գրեթե բոլոր աշակերտները: Ի դեպ, այն մեր դպրոց մուտք է գործել այս ուսումնական տարվանից. բարերար Գաստելո Մկրտչյանի նվերն է մեր կրթօջախին:

Դասին ներկա ուսուցիչների համար նույնպես շատ հետաքրքիր և մատչելի էր մատուցված նյութը: Աշակերտները հեշտությամբ կարողացան վերլուծել և համակարգել ներգծյալ ու կենտրոնային անկյունները, ինչպես են երկու կետով անցնող անթիվ բազմությամբ շրջանագծեր: Ուսուցչուհին օգտվել էր գեոգեթրա կոչվող ծրագրից:

Դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանն ասաց, որ այսուհետ բոլոր առարկայավար ուսուցիչները կարող են օգտվել ինտերակտիվ գրատախտակից, քանի որ բոլորս կատարում ենք ընդհանուր աշխատանք՝ ուղղված աշակերտներին գիտելիքներով զինելու գործին, ուսման որակի բարելավմանը:

Դպրոցի կոլեկտիվը՝ տնօրեն Կ. Պողոսյանի գլխավորությամբ, վերստին շնորհակալություն է հայտնում բարերարին՝ կրթօջախը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով համալրելու գործում ցուցաբերած աջակցության համար:

Թող բոլոր դպրոցներն էլ ունենան նման հնարավորություն: Հանուն ուսման բարելավման, աշակերտների դաստիարակության՝ մենք պատրաստ ենք ուժ ու եռանդ չխնայել:

Ազգի գոյատևման համար մեզ հարկավոր է լուսավոր միտք և հաստատուն գիտելիք ունեցող սերունդ:

**Դիանա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**  
**Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ.1 մ/հ դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ**

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅԱՆԸ ԵՎԻՐՎԱԾ ԵՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ



Վերջերս լույս տեսավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Թամար Հայրապետյանի (Ստեփանակերտի հ.7 միջն. դպրոցի շրջանավարտ) «Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատուն հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ» խորագրով ստվարածավալ աշխատությունը (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, 461 էջ): Այն տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Հարությունյան:

Հեղինակի ուսումնասիրության առարկան հայ ժողովրդական հեքիաթն է՝ իր ծիսապաշտանունքային, կրոնաառասպելական, էթնոմշակութային խորհրդանիշների ամբողջությունում, որոնք իրենց դրսևորումներն են գտել նաև վիպապատմական բանահյուսության մեջ («Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», «Սասնա ծռեր»), որոնցում կենցաղավարում են մեր ժողովրդի առասպելաբանական մտածողությունը, հավատալիքները, ծեսերը, նիստուկացը, պատմաշրջանների աշխարհըմբռնման ու կենսահայեցողության հետքերը, ինքնության ու աշխարհընկալման առանձնահատկությունները, սակայն փաստավերագրական կարևոր արժեք ներկայացնող սույն աշխատության երեք գլուխներում ուսումնասիրության են ենթարկվել հայ բանահյուսության մեջ արտացոլված դաստիարակչական արժեք ունեցող գաղափարների համակարգը, և դրանք արտացոլվող երկերի գեղարվեստական առանձնահատկությունները: Համազգային և համամարդկային չափանիշներով բացահայտվել են նրանց տեղն ու դերը ոչ միայն համազգային ժողովրդական մանկավարժության, այլև գեղարվեստական մշակույթի գանձարանում:

Աշխատության հրատարակության նշանակությունը արժևորվում է նրանով, որ հեղինակի ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես բանագիտության, գրականագիտության, ազգագրության, հոգեբանամանկավարժական գիտությունների բնագավառում, այնպես էլ հայեցի դաստիարակության նոր համակարգի մշակման և կրթադաստիարակչական գործնական աշխատանքներում: Ի դեպ, աշխատությունը նաև նախատեսված է բուհերի հումանիտար դասախոսների, ուսանողության, ասպիրանտների և ընթերցողների լայն շրջանների համար:

Հայ բանահյուսության (այդ թվում՝ Արցախի) գրառամանք զբաղվել են երախտաշատ գիտնականներ, բանահավաքներ, գրականագետներ, ազգագրագետներ, մանկավարժ-պատմաբաններ, վաստակաշատ մանկավարժներ և այլ ոլորտի մասնագետներ (այդ մասին հեղինակը հիմնավորում է աշխատության հավելված 1-ում (էջ 386-397), մատնանշում է նաև օգտագործված՝ հայերեն, ռուսերեն, օտար լեզուներով սկզբնաղբյուրներն ու արխիվային նյութերը) և նրանց ուսումնասիրություններն ունեն ճանաչողական, գիտական, մանկավարժական ու գեղագիտական արժանիքներ:

Հետևաբար, խիստ կարևորում ենք Թամար Հայրապետյանի միանգամայն նորովի ուսումնասիրության գիտական արժանիքները, որի հրատարակությունը կամ արդիականությունը բնորոշվում է հայ բանահյուսության գաղափարական, գրականագիտական, ժողովրդական մանկավարժության (էթնոմանկավարժության) միտումների և գեղարվեստական ու արժանիքների ուսումնասիրումն ու գնահատումն այնպիսի ճանաչողական և մեր այսօրվա կյանքում նրա դերն ու նշանակությունը, հատկապես՝ աճող սերնդի կրթության ու հայեցի դաստիարակության գործում կարևորելու նպատակադրմամբ:

Բացահայտելու համար հեքիաթների ներքին թաքնված օրինաչափություններն ու արքետիպային խորհրդանիշները հեղինակը իր երկարամյա (շուրջ երկու տասնամյա տարիներ) հետազոտության մեջ մուտք է գործել գիտության այնպիսի բնագավառներ, ինչպիսին են բնակազմությունը, հնագիտությունը, աստղագիտությունը, տոմարագիտությունը, ժողովրդական մանկավարժությունը, ինչպես նաև ժողովրդական կյանքի ու կենցաղի ամենատարբեր ոլորտները և համեմատելով ընդհանուր առաջադասական ու պատմամշակութաբանական տվյալները՝ հանգել է միանգամայն հիմնավոր գիտական եզրակացությունների, որոնք բացահայտում են հայ ժողովրդական բանահյուսության ներքին գաղտնագրված յուրահատկություններն ու օրինաչափությունները:

Աշխատության հրատարակությունը հատկապես արդիական հնչեղություն է ստանում այն առումով, որ ի մի է բերել և քննել հայկական հեքիաթներում և հայ մատենագրության մեջ (Մովսես Խորենացի, Ազաթանգեղոս, Փավստոս Բյուզանդ, առկա մեր հին էպոսների և նոր՝ «Սասնա ծռեր»-ի խորհրդանշային ցուցիչներ, վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը հասած դրանց վերապրուկները), բացահայտել դրանց կապը ազգային մշակույթի այլ բնագավառների հետ՝ իր ձեռքի տակ չունենալով նմանատիպ ոչ մի ուսումնասիրություն: Միաժամանակ մասնակի ճշգրտումներ է մտցրել հայ ժողովրդական բանահյուսության բազմակողմանի հետազոտման մեթոդաբանական համակարգում:

Աշխատության առանձին ենթագլուխներում (առաջին գլուխ՝ 4 ենթագլուխ, էջ 9-116, երկրորդ գլուխ՝ 7, էջ՝ 117-235, երրորդ գլուխ՝ 7, էջ՝ 236-383) հայ ժողովրդական մանկավարժության և գեղագիտական երևույթները վերլուծելիս և արժեքավորելիս ղեկավարվել է իմացաբանական, բարոյագիտական, հոգեբանամանկավարժական հանրաճանաչ օրենքներով և օրինաչափություններով, մասնավորապես՝ երևույթների համակարգված և համալիր ուսումնասիրության, բովանդակության ու ձևի միասնության, պատմականության սկզբունքի պահանջով:

Աշխատությունում վեր է հանվում հայ ժողովրդական հեքիաթի և առասպելի, վիպաթի և էպոսի իրար փոխլրացնող կապակցությունը: Հեքիաթներում իրացվել են ժողովրդի կենսափիլիսոփայությունն ու հոգեբանությունը, պատկերացումներն ու ըմբռնումները մարդու դրական և բացասական հատկանիշների, կյանքի տարբեր երևույթների մասին, որոնք արտահայտվում են բյուրեղացած ասացվածքներով, առածներով, պատգամներով, բարոյական խրատներով, ազնիվ կերպարների գեղեցիկ վարքով ու արդար գործելակերպով և ամոռանալի արտահայտիչ պատկերներով:

Հեղինակը գիտական բարեխղճությամբ ուսումնասիրել է հայ բանահյուսության վիպերգական, քնարական և երգիծական ժանրերի ստեղծագործությունները և ցույց տվել, որ այդ ժանրերի լավագույն նմուշներին հատուկ են թեմատիկ և գաղափարական հարստությունը, արդիական հնչեղությունը և գեղարվեստական բարձր արժանիքները: Հեղինակի նորահայտ փաստագրական ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, որ հայ

ժողովրդական բանահյուսությունն ունի ոչ միայն համազգային, այլև համամարդկային արժանիքներ, որոնցում առանձնահատուկ տեղ են գրավում նաև մանկավարժական գաղափարների հարստությունը, արդիական արժեքն ու նշանակությունը և բարձր գեղարվեստականությունը:

Երկարամյա ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա մենագրության մեջ բացահայտված են հայկական հեքիաթների տպագիր և անտիպ հսկայածավալ ժառանգության և վիպապատմական բանահյուսության մեջ մեր պատմիչների պատմավեպերի արքետիպային հարակցումներն ու այլաբանական պատկերացումները: Առաջին անգամ հայկական հեքիաթները քննության են ենթարկվել միջազգային հեքիաթաբանության ուսումնասիրության կուտակած փորձի համատեքստում՝ իբրև վերջինիս բաղկացուցիչ, որոնց թեմատիկ փոխառնչությունները, ինչպես նշում է հեղինակը, ուղեկցվել են Արմեն-Թոմփսոն-Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերը» եռամաս նշագանկով: Այս առնչությամբ հարկ են համարում մատնանշել, որ հեղինակը ազգային թե միջազգային նյութի ընդգրկման և քննության ընթացքում հանդես է բերել բարձր գիտականություն: Քննարկվող հարցերի բազմակողմանի ու խոր իմացություն, փաստարկման հիմնավորվածություն ու համոզվածություն, նյութի ճիշտ ըմբռնման, եզրահանգման և գնահատումների համոզիչ կարողականություն. սրանք են պայմանավորում աշխատության գիտական արժեքը:

Մասնագիտական տեղեկատվական հենքով և գիտական վերլուծությամբ առանձնանում են աշխատության երկրորդ («Ծիսաառասպելաբանական մոտիվները հայկական հրաշապատուն հեքիաթներում և ժողովրդական հնագույն վեպերում») և երրորդ («Անծանոթ աշխարհների ու առարկաների այլաբանական ընկալումը հայկական հրաշապատուն հեքիաթներում») գլուխները, որոնցում հեղինակը բանահյուսությանը վերաբերող հարցերի վերլուծությունը զուգակցում է ժողովրդական մանկավարժության հիմնադրույթների հետ և թեմատիկ խմբավորման սկզբունքով, կոնկրետ երկերի վերլուծությունների հիման վրա ցույց է տրվում, թե ինչպես բազմազան ժանրերում իրենց արտացոլում են գտել դաստիարակչական գաղափարները, հատկապես՝ բնապահպանական, կրոնական դաստիարակության սկզբունքները, դատողություններն ու մտքերը, որոնցով դաստիարակվում է ներկա սերունդը: Բնորոշ է, որ բարոյականության հասարակական

ըմբռնումները հայ բանահյուսության մեջ բխում են համամարդկային այնպիսի արժեքներից, ինչպիսին են մարդասիրությունը, բարու արարչագործությունը, այլասիրությունը, հայրենասիրությունը, ազնվությունը, խաղաղասիրությունը և այլն:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունից հայտնի է, որ մեր ժողովուրդը, նրա արցախյան հատվածը Աստու գաղափարի մեջ փորձել են հասկանալ կյանքի արարչագործության, հոգևոր-բարոյական արժեքների խորունկ իմաստը, դարեր անընդհատ Ավետարանն օգտագործել են որպես բնության, կյանքի, մահկանացուի խորհուրդը մեկնաբանող, հոգևոր կատարելագործման ու բարոյական դաստիարակության անփոխարինելի մի աղբյուր: Հեղինակը, անդրադառնալով այդ հարցի քննարկմանը, մատնանշում է, որ հայ ժողովրդի դարավոր գոյապայքարում հսկայական դեր են կատարել Հայ Առաքելական Եկեղեցին ու հոգևորականությունը՝ սատարելով ազգային հեքիաթների, ծիսակատարությունների, տոների և այլ ավանդությունների պահպանմանը: Բանասիրական գիտությունների դոկտոր Թամար Հայրապետյանի սույն աշխատությունը, լինելով հետաքրքիր մտահղացումների արդյունք, հայ բնագիտության պատմության մեջ առաջին անգամ ներկայացվում է հեքիաթների խրթին ու դժվարին բնագավառի վերաբերյալ ծանրակշիռ և շատ շահեկան մի աշխատանք՝ որպես նոր ձեռքբերում հայագիտության ոլորտում:

Գրքի պատասխանատու խմբագիր Ս. Հարությունյանը գրում է. «Ես խիստ կարևորում եմ Թամար Հայրապետյանի աշխատության գիտական արժեքը՝ իբրև հայկական հրաշապատուն հեքիաթների և վիպապատմական բանահյուսության նախասկզբնական հետազոտություն: Այս առնչությամբ հարկ են համարում մատնանշել, որ Թամար Հայրապետյանը ազգային և միջազգային նյութի ընդգրկման և քննության ընթացքում հանդես է բերել պատշաճ գիտականություն, նյութի ճիշտ ըմբռնման, եզրահանգման և գնահատումների համոզիչ կարողականություն. սրանք են պայմանավորում աշխատության գիտական արժեքը:

Մասնագիտական տեղեկատվական հենքով և գիտական վերլուծությամբ առանձնանում են աշխատության երկրորդ («Ծիսաառասպելաբանական մոտիվները հայկական հրաշապատուն հեքիաթներում և ժողովրդական հնագույն վեպերում») և երրորդ («Անծանոթ աշխարհների ու առարկաների այլաբանական ընկալումը հայկական հրաշապատուն հեքիաթներում») գլուխները, որոնցում հեղինակը բանահյուսությանը վերաբերող հարցերի վերլուծությունը զուգակցում է ժողովրդական մանկավարժության հիմնադրույթների հետ և թեմատիկ խմբավորման սկզբունքով, կոնկրետ երկերի վերլուծությունների հիման վրա ցույց է տրվում, թե ինչպես բազմազան ժանրերում իրենց արտացոլում են գտել դաստիարակչական գաղափարները, հատկապես՝ բնապահպանական, կրոնական դաստիարակության սկզբունքները, դատողություններն ու մտքերը, որոնցով դաստիարակվում է ներկա սերունդը: Բնորոշ է, որ բարոյականության հասարակական

**Արմինե ԲԱՂՎԱՍՏՐՅԱՆ**  
**ԱրՊՀ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ**

ՄՇԱԿՈՒՅՑ

ՆԱ ԵՎԱԳՈՒՄ Ե ՌՉ ԹԵ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼԱՐԵՐՈՎ, ԱՅԼ ՀՈԳՈՒ ԵՎ ՍՐՏԻ...
Էդուարդ Թադևոսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ



Էդուարդ Թադևոսյան. վիրտուոզ ջութակահար, 33 ժողովրդական արտիստ, միջազգային մրցույթների և Պետական մրցանակի դափնեկիր, Կոմիտասի անվան պետական լարային քառյակի առաջին ջութակ և գեղարվեստական ղեկավար, Երևանի պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի ղեկավար, պրոֆեսոր: Անասիան հմայքով օժտված այր, ում հետ շփվելիս անհնար է չհիանալ նրա մարդկային տեսակով, ազնվությամբ և անկեղծությամբ: Նրա ամբողջ կյանքը նվիրում է Նորին Մեծություն Երաժշտությանը, որին ազնվորեն ու անմնացորդ ծառայելու համար պարգևատրվել է 33 «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և 3 այլ Առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշաններով: Երաժիշտ կատարողի նրա տաղանդը սիրում ու բարձր են գնահատում հայրենի և օտարերկրյա երաժշտագետներն ու երաժշտասերները: Արցախյան հանդիսատեսը քաջածանոթ է մասետրոյի արվեստին այստեղ ունեցած նրա անմոռանալի ելույթներին ու համերգներին և միշտ սիրով ու կարոտով է սպասում նրան՝ թե՛ որպես մենակատարի, թե՛ քառյակի կազմում: Սիրված ջութակահարի հետ յուրաքանչյուր հանդիպում դառնում է իսկական տոն, վերածվում երաժշտական հրավառության: Լրագրողական աշխատանքի բերումով բախտ է վիճակվել քանիցս ի մոտո շփվելու նրա հետ, վայելելու նրա շիտակ, անկեղծ խոսքն ու հրաշալի հումորը:

Ծնվել է 1942 թ. մայիսի 2-ին Երևանում: Արմատներն Արևմտյան Հայաստանից են, և մինչև այսօր ունեցել են արձագանքում են Երգի կորցրած տատի խոսքերը. «Թեև երգ թափա, Թալաթ»: Թեպետ հայ-քրիստոնյայի համար մեղք է համարվում շուրթերն անեծքով պղծելը, բայց սրտի ցավն այնքան խորն էր ու վերքն անդարձանելի, որ Աստուծու հետ տատի համապագորյա աղոթք-գրույցի վերջաբանը միշտ նույնն էր՝ անեծք իր ժողովրդի դահճին:

Հայրն ինժեներ-ճարտարապետ էր, մայրը՝ տնային տնտեսուհի, թեպետ կյանքից վաղ հեռացած անուսնու մահից հետո ստիպված էր տարբեր աշխատանքներ կատարելով ոտքի կանգնեցրել զավակներին: Եվ ինչպես լինում է սովորաբար, ծնողների որոշմամբ նա ընդունվեց երաժշտական դպրոց, անգամ գործիքի ընտրությունն էլ նրանցն էր:

Առաջին մենահամերգն ունեցել է 12 տարեկանում, երբ սովորում էր Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի 5-րդ դասարանում, վաստակավոր ուսուցիչ Տատյանա Հայրապետյանի մոտ: Հայրապետյանն է նշում, որ 11 տարի տարի ուսանել է նույն դասատուի մոտ, ինչը երաժշտական աշխարհում գրեթե բացառություն է: 1963-ին նշվում էր աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 60-ամյակը: Հրեյանական համերգի փորձերից մեկին ուսուցչուհին խնդրում է կոմպոզիտորին լսել 9-րդ դասարանում սովորող իր սանին, որը կատարում է նրա Ջութակի կոնցերտը: Կոմպոզիտորի առաջարկով մեկ օր անց կայացած համերգին պատանի երաժիշտը կատարել է նրա Ջութակի կոնցերտը՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ: Կոմպոզիտորի հետ հանդիպումը ճակատագրական դեր խաղաց նրա կյանքում. այն դրեց հաղթարշավի սկիզբը. երկու տարի անց նա արդեն Թբիլիսիում կայացած Անդրկովկասյան մրցույթի դափնեկիր էր: Նույն թվականին ընդունվել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիա՝ հայտնի ջութակահար Լեոնիդ Կոզանի դասարան: Ուսանողական տարիներին երկու անգամ դարձել է միջազգային մրցույթների դափնեկիր (1967թ.՝ Վենյամկո անվան, Լեհաստան և 1969թ.՝ Մ. Լոնգի ու ժ. Տիբոյի անվան, Փարիզ): Ավարտական կուրսում Կոմիտասի անվան քառյակի հիմնադիր Ավետ Գաբրիելյանը նրան հրավիրել է քառյակ՝ որպես երկրորդ ջութակահար: Այդ տարիներին, որպես մենակատար-ջութակահար, ելույթներ է ունեցել ԽՍՀՄ-ում և արտասահմանում:

1976 թ. Ա. Գաբրիելյանը նրան է փոխանցել իր ջութակը (18-րդ դարի մեծագույն վարպետ Գվարներին գործն է, որը Խորհրդային Հայաստանի կառավարությունը գնել էր հատուկ նրա համար) և առաջին ջութակահարի իր տեղը: Ցայսօր ջութակահարն անբաժան է գործիքից:

Քառյակի ղեկավարությունն ստանձնելուց հետո էր. Թադևոսյանի կյանքի իմաստը դարձավ քառյակի գոյության շարունակականության ապահովումը: Նրան են

նվիրվել հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործություններ, ինչպես ջութակի, այնպես էլ կվարտետի համար, որոնց առաջին կատարողն էր Էդ. Թադևոսյանը: Տարիների հետ վաստակավոր խմբի կազմը փոփոխությունների է ենթարկվել, տարբեր երաժիշտ կատարողներ են գեղեցրել 2-րդ ջութակի, ալտահարի ու թավջութակահարի աթոռները, անգամ տասնամյակներ ի վեր բացառապես արական կազմով հանդես եկած քառյակի կազմում վերջին տարիներին գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ ընդգրկվեցին, բայց առաջին ջութակն ու գեղարվեստական ղեկավարը, այսինքն՝ քառյակի շունչն ու ոգին մնացին անփոփոխ: Երաժիշտները վստահեցնում են՝ չնայած քառյակի անդամները բազմիցս փոխվել են, սակայն գաղափարը մնացել է նույնը՝ գեղեցիկ և գրագետ մատուցել դասական երաժշտություն, իսկ օտարներին ներկայացնել հայկական դասական երաժշտություն, հատկապես՝ Կոմիտաս: Կոմպոզիտոր Էդուարդ Սիրոյանն այսպիսի ջերմ տողեր է նվիրել քառյակին. «Նրա (քառյակի) համերգները միշտ Մեծ ԵՐԱՇՇՏՈՒԹՅՈՒՆ են՝ առաջին նոտայից մինչև վերջինը... Իսկ Արամ Խաչատրյանն այն գնահատել է որպես Հայաստանի երաժշտական մշակույթի գարդ:

Քառյակը սիրված ու սպասված խումբ է ոչ միայն Հայաստանում ու Արցախում, այլև արտասահմանյան բազմաթիվ երկրներում: Գործունեության վաղ շրջանից սկսած կոմիտասյանները խոշոր ծառայություն մատուցեցին կվարտետային երաժշտության տարածմանը: Իր գոյության ողջ ընթացքում քառյակը հարգարավոր համերգներով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում. «Մենք տուրիստ չենք, մենք գնում ենք առաքելությամբ, մենք պարտավորություն ունենք նրա մշակույթի, մեր պետության առաջ»,- վստահեցնում է քառյակի ղեկավարը: Որպես մենակատար-ջութակահար և քառյակի կազմում Թադևոսյանը ելույթներ է ունեցել 50-ից ավելի երկրներում: Լինելով վաստակավոր այս կոլեկտիվի երկարամյա գեղարվեստական ղեկավարը՝ վիրտուոզ ջութակահարը հաճախ է բախվում նյութական խնդիրների, որոնց լուծումը դժվարությունների հետ է կապված և մարդկային այլ որակներ է ենթադրում: Եվ երբ ասում է. «Արժանապատվությունս ինձանից 5 րոպե առաջ է ծնվել»,- պարզ է դառնում, թե հարափոփոխ մեր ժամանակներում որքան բարդ է մնալուն արժեքների դավանելը:

Մեծ է էդ. Թադևոսյան մանկավարժի ավանդը նոր սերնդի երաժիշտ կատարողների ձևավորման գործում: 1988-1998 թթ. նա ղեկավարել է կոնսերվատորիայի լարային ամբիոնը, իսկ 1996-ից առ այսօր նվագախմբային ֆակուլտետի ղեկավարն է, ասել է թե՛ համերգային գործունեությունը հաջողությամբ զուգակցում է մանկավարժության հետ: Նա դաստիարակել է հանրապետական և միջազգային մրցույթների մի շարք դափնեկիրների, որոնց մեծ մասն այսօր արտերկրում է ծառայում երաժշտությանը: «Շնորհաշատ ուսանողների ար-

տահուքն ինձ շատ է մտահոգում,- անկեղծանուն է երաժիշտն ու հավելում.-ինձ հետ ավարտած ու հիմա դրսում մեծ համբավ վայելող երաժիշտներն ինձ հաճախ են ասում. «Դու մնում ես քո ուսանողների համար, բայց նրանք գնում են»: Ես էլ հակադրվում եմ, բայց չե՛ որ մնացողներ էլ կան»:

Երկար տարիներ նա Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հանձնաժողովի նախագահն է և Ա. Գաբրիելյանի ու Ս. Ասլամազյանի անվան հանրապետական մրցույթի հանձնաժողովի անփոփոխ նախագահը:

Սիրված ջութակահարի 70-ամյակը նշվել է Արցախում՝ հոկտեմբերի 25-ին մայրաքաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դահլիճում Կոմիտասի անվան պետական լարային քառյակի և Արցախի պետական կամերային նվագախմբի(ԱՊԿՆ) համատեղ համերգով, իսկ այս տարվա հունիսի 9-ին և 10-ին՝ Երևանի Արամ Խաչատրյան համերգասրահում՝ հոբելյանական զույգ համերգներով: Առաջին օրը ելույթ է ունեցել քառյակը, իսկ 2-րդ օրը՝ Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) հանդես են եկել Մասետրոյի ուսանողները, որոնք թվում է Իսպանիայից եկած նրա զարմիկը՝ շնորհաշատ ջութակահար Ջոհրաբ Թադևոսյանը:

Հրեյանական համերգային երկմասանոց ծրագրի առաջին մասն ամբողջությամբ քառյակի կատարումներից էր կազմված, իսկ 2-րդ մասում՝ ԱՊԿՆ-ը կատարեց Սիմոն Սարգսյանի «Հավերժ հիշատակ» պոեմը և Էդ. Սիրոյանի սիմֆոնիան՝ լարային նվագախմբի և գուսերի համար: Բացման խոսքում ԱՊԿՆ-ի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ԱՀ ժողովրդական արտիստ Գևորգ Մուրադյանը հակիրճ ներկայացրեց անվանի ջութակահարի անցած ուղին՝ բարձր գնահատելով նրա ավանդը հայ լարային կատարողական դպրոցի զարգացման գործում: Ապա ԱՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանի անունից Գ. Մուրադյանը Աժ-ի հուշամեդալ հանձնեց անվանի ջութակահարին:

Հրեյանական համերգին քառյակի կատարմամբ, ինչպես բանաստեղծը կասեր, նորից «երգեց-մորմոքեց աստվածային Կոմիտասը»... Ինչեցին Կոմիտաս-Ասլամազյանի «Երկինքն ամպել ա», «Ալլա յալուդս», «Հարբբան», «Շողեր ջան», «Բելեր-ցուլեր», «Վաղարշապատի պար», «Գարուն ա» ստեղծագործությունները (վերջին կատարումը նվիրվեց մեկ շաբաթ առաջ ռուսական բանում իր մահկանացուն կնքած արցախյան մեծ բարերար Լևոն Հայրապետյանի հիշատակին) և Դմիտրի Շոստակովիչի հ.4 լարային կվարտետի 3-րդ և 4-րդ մասերը: Տաղանդավոր ջութակահարի հրաշք աղեղը և անարցունք լացը ամեն անգամ ուղղակի փոթորկում են դահլիճը: Այդ պահին թվում է, թե ջութակը նրա մարմնի մի մասն է՝ սրտին սերտաճած շարունակություն, և նա նվագում է ոչ թե սովորական լարերով, այլ հոգու և սրտի... Հանդիսատեսը չէր ուզում բաժանվել և, տեղի տալով չդադարող ծափերին՝ քառյակը կատարեց և մի սքանչելի գործ՝ «Կաքավիկը», որն ասես հրաշք-տեսիլքի պես մի վայրկյան միայն ցուլաց-անցավ: Բոլոր կատարումներն աչքի ընկան անթերի հղկված վարպետությամբ, ասես հրաշալի հպանցիկ տեսիլներ լինեին, որոնք ցուլանում են հանդիսատեսի առջև՝ իրենց հետևից թողնելով լույս ու ջերմություն:

Համերգի ավարտին էդ. Թադևոսյանը Գ. Մուրադյանին հանձնեց աշխարհի ամենատարակալ երաժշտական կոլեկտիվի՝ Կոմիտասի անվան՝ այսօր արդեն 92 տարեկան քառյակի 90-ամյակի առթիվ հրատարակված գիրք-ալբոմը, որում ներկայացված է խմբի պատմությունը և՛ տեքստով, և՛ լուսանկարներով, և՛ հայտնի երաժիշտների շնորհավորանքներով: Նաև նվիրեց Կոմիտասի ստեղծագործությունների մշակումների վերջին ծայրագրությունները քառյակի կատարմամբ:

ԱՊԿՆ-ի տնօրեն Ս. Սարգսյանի խոսքով՝ իր ստեղծագործական կյանքում մեծ դեր ունի հրեյանը՝ որպես երաժիշտ-կա-

տարող. «Իմ երաժշտական կյանքում մեծ դեր են կատարել ուսուցիչ-կոմպոզիտորներ Էդուարդ Ղազարովը, Ղազարոս Սարյանը և Էդուարդ Սիրոյանը: Ներկա պահին ես առնչվում եմ Էդուարդ Թադևոսյանի և մասետրո Մուրադյանի հետ, նրանք ներկայացնում են կատարողական արվեստի դպրոցը: Մասետրո Թադևոսյանը բազմաթիվ կոչումներ, շքանշաններ, մրցանակներ ունի, բայց, ըստ իս՝ կյանքում նա ծեռք է բերել ամենաբարձր՝ Սարդ լինելու կոչումը, երկրորդը՝ կառանձնացնել նրան որպես երաժիշտ և որպես միջազգային մակարդակի ջութակահար: Ես կուզեմայի նրա մեծ մարդիկ այս աշխարհում շատ լինեն, նրա շնորհիվ հայկական, ռուսական և արտասահմանյան դասական կվարտետային ժանրի գործերը լայն տարածում են ստանում աշխարհում ...

Հրեյանյանի ուղղված մեր բլից-հարցումները դիմանկարի ամբողջացման միտում ունեն:

- Մասետրո, ի՞նչ փոխվեց 70-ից հետո: - Առաջինը պիտի հավատաս դրան, ես չեմ հավատում (ծիծաղում է)...

- Ասե՛նք երկու 35... - Այո, այդպես ասեմք, փորձեմք դեռ ինչ-որ բանի ունակ լինեմք, ինչ-որ բանով ուրախացնեմք և՛ պրոֆեսիոնալ, և՛ մարդկային առումով: Համեմատելու համար ավյուրը և ցանկությունը կարծես չի պակասել:

- Անցած տարիների ընթացքում կարողացել եք ձեզ համար հայտնագործել կյանքի հիմնական օրերը: - Մարդ լինել, ապրել լավություն անելով, եթե կարող ես մեկին օգնել, անպայման այդ օգնությունը հասցնել մարդուն:

- Ի՞նչն է ձեզ երջանկություն պարգևում: - Ուրիշին երջանկացնելը: - Ամենաբանական խորհուրդը, որ երբևէ լսել եք... - Հորիցս էր՝ բարի եղիր, ներող եղիր, ազնիվ եղիր: Ինքն այդպիսին էր և ինձ համար մինչև այսօր մնում է մարդկային էտալոն:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք մարդ-արարածին: - Ասում են չե՞, գեղեցկությունը կփրկի աշխարհը, ես ասում եմ բարությունը կփրկի աշխարհի: Կարելի է լինել շատ գեղեցիկ, բայց ամեն ինչից բացակա: Գեղեցկությունը վախճանում է ժամանակից, իսկ բարությունը հավերժական է:

- Ի՞նչն է պակասում այսօր: - Սրտացավությունը և պրոֆեսիոնալիզմը: - Եթե հնար լիներ, կյանքի ո՞ր հատվածը կվերադարձնեիք: - 70-ական թվականները, որոնք համարյա համընկան մոսկովյան տարիներին, քառյակ ընդունվելուն և ընտանիք կազմելուն... Բուռն սիրով ես եր, որը համընկավ իմ ստեղծագործական աճի շրջանին:

- Եթե հնարավոր լիներ, մարդկային հարաբերություններում ի՞նչը արձատարի կանեիք: - Սրիկայությունը, քինախնդրությունը, չարությունը և նախանձը: Մարդը պիտի թե՛ն չպահի, ներող և բարոյացական լինի:

- Երիտասարդ շնորհալիներին ի՞նչ կասեիք: - Կուզեի, որ անմնացորդ նվիրվեին իրենց մասնագիտությանը, չանեն այն սխալները, որոնք ես երիտասարդ ժամանակ արել եմ՝ ծուլությունը: Ընդհանրապես, ընդունակություններով օժտված մարդը պիտի գնահատի, որ ճակատագիրը իրեն համբուրել է ինչ-որ շնորհի և տվել է: Ցավոք, օժտված մարդիկ, որոնք հեշտ են հասնում արդյունքների, ավելի ծուլ են լինում:

- Սեփական բնավորության ո՞ր գիծն է ձեզ գոհացնում: - Ընկերներս ասում են, որ իմ բնավորությունը շատ մեծն է իմ սիրած ծաղկին: Ես շատ եմ սիրում կակաչը՝ սևը ներսն է, կարմիրը՝ դուրսը: Չեմ սիրում իմ բացասական հույզերն ու տրամադրությունը մարդկանց վզին փաթաթել:

- Մասետրո, ի սրտե շնորհավորում ենք հրեյանի առթիվ, մարդուն քաջառողջություն, արևշատություն, երիտասարդական ավյուր ու երջանկություն:

ԱՅԼԱԶԱՆ

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՊՐՈՑԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հին Հունաստանի ազգային դպրոցի հիմնական ուշադրությունն ուղղված էր երեխայի աստիճանական զարգացմանը: Դպրոցը կապ է ստեղծում ծնող- ուսուցիչ-պետություն հարաբերության միջև: Սակայն դպրոցի հիմնական նախապայմանը բարձր ինտելեկտով ուսուցիչներ ունենալն էր: Աթենքը կոչվում էր պոլիս-պետություն: Մ.թ.ա. V-IV դարերում այնտեղ տիրում էին դեմոկրատական կարգեր: Այդ հասարակարգի կայացումը հենված էր ազգային դպրոցի ստեղծագործ աշխատանքի վրա, այսինքն՝ դպրոցն իր վրա էր վերցնում կազմակերպված, գիտական ներուժով հարուստ հասարակության ստեղծումը: Նախքան ուսուցիչը կմտներ դպրոց, բացի բարձրագույն կրթությունից, վերապատրաստվում էր, և քննություն-մրցության ժամանակ հաղթելուց հետո էր նրան իրավունք վերապահվում աշխատել դպրոցում: Ուսուցիչը (սոփիստը), բացի իր մասնագիտությունից, պետք է լավ իմանար մանկավարժ-դաստիարակի սկզբունքները: Աթենքի ազգային դպրոցն ամենամեծ ուշադրությունն ուղղում էր ուսուցչի գործունեությանը: Լավ ինտելեկտ ունեցող ուսուցիչը դեռ չէր նշանակում լավ մանկավարժ և լավ մասնագետ, կարևորը գիտելիքներն աշակերտներին մատուցելն էր ու նրանց կողմից յուրացնելը: Ամենօրյա ակտիվ գործունեության շնորհիվ էր ուսուցիչը հասնում հաջողության: Աթենքում ուսուցիչը կոչվում էր պետության կողմից վստահված և լիազորված անձ: Երևի ոչ մի հասարակարգում ուսուցիչն այնքան հարգված չի եղել, ինչքան Աթենքի ժողովրդավարական պետությունում: Ուսուցիչն ամեն տարի պարտավոր էր կատարած աշխատանքները ներկայացնել ժողովրդական ժողովում: Նա այնքան աշխատավարձ էր ստանում, ինչքան՝ բուլլայի խորհրդի անդամները:

Աթենքի դպրոցը բաժանվում էր երկու տիպի՝ երաժշտական և մարմնամարզական: Վերջին տիպի դպրոցները կոչվել են գիմնազիոններ: Հունական դասական շրջանի հիմնական երկու կարգի դպրոցները՝ երաժշտական և գիմնազիական, պահպանվել են մահ հելլենիստական ժամանակաշրջանում:

Բարձրագույն փիլիսոփայական դպրոցները չորսն էին՝ ակադեմիա, լիկեյ, սոփիկյան և էպիկուրյան:

Աթենքի հելլենիստական շրջանի կրթությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

ա) տնային կրթություն (1-7 տարեկանների համար)

բ) գրաճանաչություն (8-12 տարեկաններ)

գ) գիմնազիոններ (17-19 տարեկաններ)

դ) էֆեբիաներ (20-22 տարեկաններ)

ե) փիլիսոփայական (23-31 տարեկաններ):

Կրթության գլխավոր կենտրոններն էին Աթենքը, Պերգամը, Ալեքսանդրիան:

Աթենքում գերիշխում էին փիլիսոփայական դպրոցները, Ալեքսանդրիայում գոյություն ուներ Մուսեոնը, իսկ Պերգամում՝ Նեոյը:

Նեոյում ընդունվում էր էֆեբիաներն ավարտած երկսեռ երիտասարդությունը: Այսինքն՝ էֆեբիական դպրոցում սովորում էին տղաներ և աղջիկներ: Էֆեբիական բարձրագույն

դպրոցներն անմիջականորեն չէին ենթարկվում զինվորական իշխանություններին, այս վերջինները չէին միջամտում էֆեբիաների ներքին կյանքին: Էֆեբիաներն ունեին իրենց առանձին դեկավարությունը, որը գլխավորում էր, այսպես կոչված, Կոսմետոսը. սրան ընտրում էր ժողովրդական ժողովը՝ մեկ տարի ժամկետով:

Աթենքում գիմնաստիկան կամ ֆիզիկական դաստիարակությունն առաջնակարգ տեղերից մեկն էր դաստիարակության գործում:

Հայտնի է, որ հատուկ շեքերում, որ կոչվում էին պալայստրաներ, տեղի էին ունենում մարմնամարզական պարամունքներ, որոնք հիմնականում ընդգրկում էին հինգ տեսակ.

ա) վարժություն, որ հույներն անվանում էին պենտաթլոն. դա վազքն էր (դրոմոս, ստադիոն-ծեր),

բ) ցատկ (հալմա-прыгание), գնդախաղ, շրջանակ,

գ) նետում (դիսկոբոլիս-метание диска) և մրցություն (պիգ-նե-ծործա):

Հին հունական Աթենքի դպրոցներ էին կոչվում արիեստագործական դպրոցները: Դրանցում սովորում էին ստրուկները, որոնցից պատրաստվում էին որակյալ աշխատողներ զանազան տիպի արիեստների մեջ, տնային աշխատանքների համար և այլն: Այսպիսի դպրոց գոյություն է ունեցել Սիրակուզա քաղաքում: Դեռ մ.թ.ա. 6-րդ դարում հայտնի է եղել Սիկիոնի քանդակագործության դպրոցը Հունաստանում, որը ծաղկման էր հասել մ.թ.ա. 4-րդ դարում և հայտնի է եղել մահ նկարչությանը ու գծագրությանը, իսկ

Պերիկլեսի օրոք Հունաստանում հռչակված էր Ֆիդիասի նկարչական դպրոցը:

Աթենքում պետականից բացի կային և մասնավոր դպրոցներ: Հայտնի մասնավոր դպրոցներից էր Պլատոնի ակադեմիան: Իր հուշերում Պլատոնը գրել է. «Իմ դպրոցից ոչ ոք դուրս չի գա առանց գիտելիքների»: Պլատոնի դպրոցը հակված էր հունական հասարակության զարգացմանը:


Աթենքի դպրոցներում աշխատում էին ավագ և կրտսեր սոփիստներ:

Հայտնի սոփիստներից էր Սոկրատեսը: Նա հայտնել է իր տեսակետը մարդու ինտելեկտի մասին՝ նշելով, որ գոյություն ունեն բացարձակ էթնիկական արժեքներ, որ խիստ անհրաժեշտ են հասարակությանը: Նա խնդիր էր դրել, որ սոփիստը պետք է ծնունդ տա աշակերտի մտքերին, և գլխավոր մեթոդն այն էր, որ աշակերտը սիրի ինտելեկտը, առանձնապես՝ գիտության կանոնները:

Նրա բուն նպատակն էր, որ մարդն ուսունասիրի ինքն իրեն: Գիտությունն ուսանած մարդը պետք է խղճի և պարտքի զգացում ունենա: Գիտության տերը մարդն է՝ բնության միակ բանական արարածը: Սակայն գիտությունը հզոր է դառնում այն ժամանակ, երբ մարդը տիրապետում է նրան: Բնությունը դառնում է գիտության համար կամ զոհ, կամ արքա: Այնպես որ, եթե ինտելեկտը բարի նպատակների համար ծառայի, բնության շքեղությունը կավելանա:

**Պարտապետ**  
**Կարմեն ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ**  
**Խնամախի միջնակարգ դպրոցի պարմությանն ուսուցչուհի**

Խոսք հիշատակի  
**ՎԱՅԱ ՀԱՄՈՅԻ ԲԱՂՅԱՆ**



Նոյեմբերի 29-ին հանկարծամահ եղավ մեր սիրելի գործընկեր Վայա Բաղյանը: Մարդ, որ իր բարի գործերով և մարդկային բարձր հատկանիշներով միշտ օրինակ է ծառայել շրջապատին: Մեծ հարգանք վայելող, կշռադատված պահվածքով, հանգիստ, սիրալիր անձնավորություն էր: Անհավատալի է, որ մահն մարդիկ կյանքից հեռանում են անժամանակ:

Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի կուլեկտիվները խորապես սգում են Վայա Բաղյանի անժամանակ մահը ու ցավակցում մեր գործընկեր Մանանա Պետրոսյանին՝ սիրելի մայրիկի վաղաժամ մահվան կապակցությամբ և համբերություն մաղթում ընտանիքի մյուս անդամներին: Ծանր և անդառնալի է կորուստը:

Դու հավերժ կմնաս մեր հիշողության մեջ՝ որպես բարու սերմնացան, սիրելի՛ գործընկեր:

*Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կուլեկտիվ*

ԱՅՆԱՆ ՀՐԱԾԵՑ ԱՍԿԵՐԱՆԻ ՄՊՍԿՈՒՄ

Հիրավի, չկա ավելի մեծ երջանկություն, քան տեսնել քո շրջապատում ուրախությունից փայլող անմեղ աչքեր, անբիծ ու զուլալ մի աշխարհ, որտեղ իշխում է միայն բարին, անաղարտը, լուսավորը: Հենց այդպիսի մի պայծառ մի տրամադրություն էր տիրում Ասկերանի ՄՊՍԿ-ում: Կենտրոնը նշում էր աշնան հանդեսը, որը վերածվել էր մի իսկական տոնի: Ոսկի ու դեղին հագած դահլիճը դրախտավայր էր հիշեցնում, իսկ պատուհաններից ներթափանցող արեգակի ճառագայթները մի յուրահատուկ ջերմություն էին հաղորդում ներկաներին: Հեռացող աշունն իր ողջ շքեղությամբ հյուրընկալվել էր այստեղ: Առատ ու բազմապիսի մրգերի խենթացուցիչ բույրը միահյուսվել էր աշնանային գունագեղ ծաղիկների բուրմունքի հետ: Ամեն ինչ այնքան ներդաշնակ էր, այնքան նրբագեղ ու դուրսի...

Կենտրոնի սաները թռվում էին խմբակավարների և ծնողների շուրջը՝ պատրաստ ներկայացնելու տարվա հիասքանչ այս եղանակը:



Միջոցառումը կազմակերպել էր ՄՊՍԿ փոխտնօրեն Նելլի Ալանյանը:

Երեխաներն իրենց հանդեսն սկսեցին «Բարի բերք» երգով, և միանգամից նրանց ուրախ տրամադրությունը փոխանցվեց մեծերին: Փոքրիկ Սոնիկայի ողջույնի խոսքը համեմված էր սիրով ու աշնանային հույզերով: Նա բոլորին մաղթեց լի, առատ ու անհոգ կյանք, խաղաղ երկինք և խոստացավ աշնանային մի իսկական հեքիաթ պարզել ներկաներին:

Սաներն արտասանեցին, երգեցին և մեծարեցին տարվա հիասքանչ եղանակն ու նրա տված բարիքները: Մի առանձին հիացմունքով նկարագրելով բազմապիսի զույներ հագած աշունը՝ նրանք դարձել էին հեքիաթի իսկական հերոսներ: Փոքրիկներն այնպես էին պարուն, որ նրանց ոգևորությունը վարակել էր մահ ծնողներին: Այգեստանի մասնաճյուղի թատերական խմբակը հանդես եկավ «Անտառի բնակիչները» փոքրիկ բեմականացմամբ:

Կենտրոնի տնօրեն Մերի Գաբրիելյանը, իր սրտի խոսքը հղելով սաներին, ասաց, որ նրանք իրենցով հիանալու և հպարտանալու հերթական առիթը տվեցին. ակներև են նրանց շնորհքը, ունակությունները: Խմբակավարների օգնությամբ կարողացել են հավուր պատշաճի նախապատրաստվել միջոցառմանը: Դրանում մեծ է մահ ծնողների դերակատարությունը, որոնց հետ միշտ համագործակցում են: Տնօրենը շնորհակալություն հայտնեց հանդեսի կազմակերպիչ, փոխտնօրեն Նելլի Ալանյանին՝ բարձր մակարդակ ասպիտվելու համար:

Իրոք, Ասկերանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները կարողացան իրենց հանդեսով աշնան ողջ թովչանքը հաղորդել ներկաներին: Վառ տպավորություններով ու նոր սպասումներով հեռացանք կենտրոնից՝ հուսալով, որ հաջորդ հանդիպումը կլինի ՄՊՍԿ-ի նորակառույց շենքում...

Կարինե ԲԱՆԾԻՅԱՆ

**ՀՈՒՍԱՐԱՐ**  
ԽՍՐԱԳԻՐ՝  
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ

Ստեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Սեջերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության 4.12.2017թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: